Թ. ՏԱՐԻ 2576 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 16 ՆՊԻՍԱՍԱՐԴ 4385 26 ՕԳՈՍՏՈՍ 1892 16 ՍԵՊԵՐ 1310 ՁՈՐԵՔՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՈՒՅԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՕՐԱԳՐԻ

Վալաթիա, Կ. Պոլիս

درعلیه اداره‌سی غزته‌سی آره‌ولك اده‌سی

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳՐԻ

Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան գանձեկան արժէք	150
» » Վեցամսեայ » »	75
» » Եռամսեայ » »	40
Օտար երկիրներէ Տարեկան ժրանք	56
» » Վեցամսեայ »	28
Ընտիր թուղթի վրայ մասնաւոր տպագր. Տարեկան Օտ. Ոսկի	2
Դաւառաց թղթատարի ծախքը միօրեակ Ղրուշ	50

Խմբագրութեանս ուղղուած նամակ կամ այլ գրութիւն ետ չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, ՕԳՈՍՏՈՍ 26/7 ՄԵՊՏ. 1892

ՕՐՈՒԱՆ ԽՆԴԻՐՆ

ԿԱՑՈՒԹԻՒՆՆ Ի ՀԱՄՊՈՒՐԿ

Վիեննայի Տօրթոր մը, նամակ մը հրատարակելով Նոյտ Ֆրայ Փրէսի մէջ, շատ տխուր գոյներով կը նկարագրէ Համպուրկի մէջ տիրող կացութիւնը։ Բովանդակ առողջապահական կազմակերպութիւնն անկարգ է, և ամենայն ինչ ի նորոյ հաստատուած է, աղէտին դէմ դնելու համար։ Հիւանդները կը փոխադրեն վարձու կառքերով։ Ընդ այնմայն 150 հիւանդապահէր կան, որք ընդհանրապէս իրենց ամենօրեայ հագուստով կ'աշխատին, փոխանակ մասնագիտ լաթ հագնելու, զոր գիտնականք կը յանձնարարեն՝ իբրեւ պաշտպանութիւն հիւանդութեան ծաւալման դէմ։ Էբենատորֆի Հիւանդանոցին մէջ, ուր 800 հիւանդք կան, բժշկաց թիւն անբաւական է և գտնուած բժիշկներն անընդհատ գործ ունին, ու մեծ անձնուիրութիւն կը ցուցնեն։ Ուրիշ սովորական հիւանդներ գուրս կը հանուին՝ հնտախտաւորաց տեղ բանալու համար։ Մենակի մը մէջ 200 դիակներ քով քովի և իրարու վրայ թողուած էին՝ փոխադրման սպասելով։ Համաճարակը կոտորած կ'ընէ քաղաքին ամեն թաղերուն մէջ։ Ի սկզբան ամեն վարակուողներ կը մեռնէին, բայց հիմա 50 առ 100 է աւելի չեն մեռնողներ։ Համպուրկի միւս հիւանդանոցին մէջ կացութիւնն աւելի խեղճ է։ Աղտոտ անցքերու մէջ հիւանդաց գաղչահոտ լաթերը դէղ դէղ թողուած են ու կը մնան 4–5 ժամ մինչեւ որ ապանեխուին, և այս ծրարներուն քով մեռելներ դիզուած են խառնաչփոթ։ Դուռները բաց են, և հնտախտէ տառապելք իրենց աչքով կը տեսնեն մեռելոց թուոյն ահռելի աճումն։ Հիւանդաց մօտ երթալու համար մարդ պէտք է այս մեռեալներուն և աղտոտ լաթերուն վրայ կոխելով անցնի։ Ո՛չ ոք ճչդիւ դիտէ հիւանդաց և մեռելոց թիւն։ Երեսուն հիւանդաց համար պատրաստուած սրահի մը մէջ 60 հնտախտաւոր դրուած է, իրարու այնքան մօտ որ հիւանդապահք չեն կրնար հիւանդներուն քով երթալ դիւրաւ եւ դարմաններն ընել։ Շատ հիւանդներ խստէ անկողիններու վրայ են, որք գործածութեամբ աղտոտած են արդէն, եւ ծածկոյթ չկայ։ 40էն 60 հնտախտաւորի երկու հիւանդապահ կայ և մէկ բժիշկ։ Շփոթութիւնն այնքան ընդհանուր է որ բնաւ հնտախտէ չվարակուած մարդիկ իբրեւ վարակեալ կը բերուին, և հոս հիւանդանոցին մէջ հիւանդութեան սերմն առնելով կը մեռնին։ Անհատական բնակարաններ ուր մարդիկ հնտախտէ կը մեռնին՝ չեն ապանեխուիր։ Միայն թէ մեռնողին դոյքերն հասարակային ապանեխութեան հաստատութիւնները կը տարուին և մաքրուելէ ետքը կը վերադարձուին, բայց այս փոխադրում իսկ պատշաճ զգուշութեամբ չի կատարուիր։ Շատեր ալ հոն չկը վարակուին։ Համպուրկի Մերրակոյտը վերջապէս կէս միլիոն մարք քուէարկեց, որպէս զի իշխանութիւնք պէտք եղած միջոցն ունենան աղէտին դէմ դնելու։ Եթէ այս դրամն կէսն իսկ տան և հինգ օր յառաջ տրուէր, շատ մը թանկագին կեանքեր կը փրկուէին, և ահռելի թշուառութեան մը առաջքը կ'առնուէր։

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ՊԵՐԼԻՆԻ

Անցեալ հինգշաբթի Պերլինի մէջ բուն հնտախտի ուրիշ դէպք մը տուգուեցաւ, երեքշաբթի մեռած գործաւորին մէկ ընկերն։ Երկուքն ալ «հիւսիսային նաւահանգստին» մէջ կ'աշխատէին, և բժշկական մարմինը կը հետաքննէ այն կողմ, համաճարակին բոյնը գտնելու համար։ Պերլինի Շարլոթէնպուրկ արուարձանին մէջ երեք վարակեալք կան, բայց միկրոբաբանական զննումներնէն դեռ չիմացուեցաւ թէ ասիական են։ Հնտախտի կասկածով Պերլինի Մոապիթ հիւանդանոցը փոխադրուած 48 անձերէն 13ն արձակեցան որովհետեւ բան մը չունէին, և մնացեալց վիճակն ալ ծանր չի թուիր։ Բայց պատրաստութիւնք փութոյ պնդութեամբ յառաջ կը տարուին, և այլ ամեն հիւանդք ուրիշ տեղեր փոխադրուած և զետեղուած ըլլալով, միայն այս հիւանդանոցին մէջ 300 անկողինք պատրաստ են հնտախտաւորներու, և ի պահանջել հարկին պատրաստութիւն կայ անկողիններու թիւն 800ի բարձրացնելու։ Այս հիւանդանոց կարող բժիշկներու, հիւանդապահներու և մայրապետներու զօրաւոր մարմին մը ունի, և ուր որ վարակեալ մը գտնուի շուտով հիւանդանոց փոխադրելու համար ամեն թաղերու մէջ պէտք եղած մնօրինութիւնք ի գործ դրուած են։

—Համպուրկէ արտաքսեալ 200 աւստրեան գաղթականք չընդունուեցան յԱւստրիա, և սահմանագլխին վրայ առանձին տեղ մը բնակութիւն հաստատել հարկադրեցան։

ՌԱԶՄԱՄԹԵՐՔԻ ԱՆԲԱՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պերլինէ կը ծանուցուի թէ ապանեխականներու այնքան մեծ խնդրանք եղած է վերջին օրերս որ ո՛չ միայն դեղագործաց այլ և դեղանիւթի գործարանատերց ձեռք պատրաստ մը թերքն սպառած է բոլորովին։ Մի քանի շաբաթ յառաջ այս գործարանատերք կոչում ըրած էին դեղագործներուն և հասարակութեան ընդհանրապէս որ պէտք եղած դեղանիւթերն օր յառաջ գնեն, եւ թերքը չնեղուելու և գներնէ (գործարանատէրերն) ալ չնեղելու համար։ Շատեր անփոյթ գրասնուած էին, և հիմա հետեւանքը կ'երբեմ։ «Ասիական» հնտախտի առաջին դէպքերը Պերլինի մէջ պատահելուն պէս, ամեն կողմէ ապանեխականք կը խնդրուին մեծաքանակ։ Ահագին համեմատութեամբ բարձրացան այս դեղերէից գիներն։ Արդէն Ռուսիա մեծապէս սպառած էր դերման գործարանատերց ապանեխականներն, և հիմա Ռուսիայէն և Պերլին քաղաքէն զատ Համպուրկի և ուրիշ դերման քաղաքներու եւս խնդրանաց գոհացում տալ պէտք է։

ՆՈՐԱԳՈՅՆ ԼՈՒՐԵՐ ՀՆՏԱԽՏԻ ԸՆԹԱՑՔԻՆ ՎՐԱՑ Յ'ԵՒՐՈՊԱ

Լրագրոյս երեկի թուոյն հրատարակումէն ետքն հետեւեալ հեռագրաւորներն ստացած ենք հնտախտի ընթացքին վրայ։

ՀԱՄՊՈՒՐԿ, 4 Սեպտ.—Երէկ միջօրէէն ի վեր 528 հոգիք վարակեցան և 379 մեռան։ Յայս վայր ընդհանուր գումարն է 5,623 վարակեալ և 2,518 մեռեալ։ Ոստիկանութիւնն հարկադրեց ընտանեաց պետերն որ Մերակոյտին ծանուցանեն ամեն կասկածելի պարագայներն։ Հետեւապէս, վարակելոց թիւն աւելի քանակութեամբ պիտի ծանուցուի այսուհետեւ։ Շատ մը վարակելոց վրայ ցարդ պաշտօնական տեղեկութիւն չէր հաղորդուած, դի հիւանդներ մի քանի ժամու մէջ խնամուած և աղեկցած էին՝ առանց բժշկաց օգնութեան։

ՓԵՏԵՐՍԲՈՒՐԿ, 5 սեպտ.—Պաշտօնական հաշիւ հնտախտի

	Վարակեալք	Մեռեալք
Սեպտ. 1էն 2 Քիւվքաղաք	47	8
Նահանգ »	168	
» Վոլգայի, 31 Օգս.	3	
» Սարաթովի, 1 Սեպ.	543	237
» » 2 Սեպ.	362	17
» Քազանի 1 Սեպ.	176	74
Օրենպուրկ քաղաք	296	152
Տոնի գաւառ 31 Օգս.	732	290
Վորոնէժ օրական միջին	598	198

ՀԱՎԼՈ.—Սեպտ. 3ին, 36 անձինք մեռան հնտախտակրպ համաճարակէն։

ՊԵՐԼԻՆ.—Այսօրուընէ սկսեալ հասարակային բաղնիքները փակեցան հնտախտի պատճառաւ։ Ի Պրէմէն երկու անձինք մեռան բուն հնտախտէ։

Ս. ԹԱԳԱՒՈՐԻ ՏՕՆՆ Ի ՌՕՏՈՍԹՕ

ՌՕՏՈՍԹՕ, 20 օգոստոս

Այս տարուան Ս. Թադաւորի ուխտաւորաց բազմութիւնը 1000ի հասած կը կարծուի, որ մեծաւ մասամբ Ադր. Պոլսոյ և Փիլիպէի, Պրուսայի և Նիկոմիդիոյ, Ատաբազարի, Պանորբմայի և Պալըքէսիրի, Զմիւռնիոյ և Պերկամայի վիճակներէն, որպէս նաև Ռոտոսթոյի թեմական Մալկարայի, Զօրումի և Սիլիվրիի ժողովուրդէն։ Պոլսեցի հաղիւ մէկ կամ երկու ընտանիք եկած են։

Զերմադին շնորհակալութեան արժանի է գաւառիս կառավարիչ Հասան Խայրի փաշայի հոգածութիւնն և բարեսրտութիւնը, որպէս նաև հաղարապետ և գօմխէր էֆէնտիներու քաջալերիչ ու աշխուրջ վարմունքն, որք ընդհանուր գոհունակութեան արժանացան՝ ժողովրդեանցն հետ ազնուութեամբ և քաղցրութեամբ վարուելով, և այնչափ ուխտաւորաց բազմութիւն և քաղաքիս ժողովուրդն ուրախ ու զուարթ օրեր անցուց՝ շնորհիւ մեր հայրապետի վեհ. Սուլթանին։

Ս. Ատուածածնի վերափոխման առաւօտուն վիճակիս այցելու հովիւ Դեր. Տ. Հմայեակ եպիսկոս Դիմաքեան Ս. Պատարագ մատոյց։ Ս. Թադաւորի հոյակապ ու ընդարձակ Տաճարը լի էր յողնախտուն բազմութեամբ։ պատարագիչ Սրբազանն ընտիր քարոզ մը խօսեցաւ՝ յորում սրտագին բարեմաղթութիւններ ըրաւ Վեհ. Սուլթանի թանկագին կենաց համար և ժողովուրդը սրտաբուղխ ամէններով մասնակցեցան։

Երեկոյեան ժամերգութենէն յետոյ Ս. Բեւեռին հանդիսական թափօրն ելաւ. կրնանք ըսել թէ՝ 7-8000 անձանց բազմութիւն մը ամեն ազգի, արանց և կանանց, եկեղեցւոյ բակն և փողոցները խնուած էին. թափօրի առջեւէն կընթանային վեց ոստիկանք որոցմէ ետքը կնքահայր եղող ուխտաւորաց բազմութիւնը՝ վառուած ճրագներ ի ձեռաւ, և ապա խաչք և նորոյ ասեղնագործեալ գոնդագոյն թաւշի վրայ պատկերազարդ վեց բեշխումներ գաւազանակիրք, ապա՝ ձայնաւոր տղայք և քահանայից դասն շուրջառաջ զգեստեալք եւ սաղաւարտ ի գլուխ և այլ եւ այլ Սրբոց Մասունքներ բարձեալ։ Յետ Ջ. Հմայեակն Պատարագն ամենայն հովանաւոր ներքեւ զգեստաւորեալ ի ձեռին կը բարձրացնէր Ս. Բեւեռն։

Եկեղեցական այս թափորի շուքն ու բարեկարգութիւնը՝ բոլոր քրիստոնեայ ազգաց և ժողովրդոց վրայ խորին պատկառանք ձգեց։ և բազումք իսկ արտասուօք կը հեծեծէին թափորին։

Թափորը վանուց աւագ դռնէն դուրս ելնելով՝ փոքր դռնէն ներս ուղղակի Ս. Թադաւորի տաճարն առաջնորդուեցաւ, ուր անհամար բազմութիւն մը խըռնուած էր, դասին մէջ կային բարեխնամ կառավարութեան պաշտօնեայներէն՝ հաշուակալ Օսման էֆէնտի, Ադր. Պոլսոյ կուսակալութեան Մաբրիթի նախագահ Սուրուրի էֆէնտի, պատժական դատարանի նախագահը, մարդահամարի պաշտօնեայն, որպէս նաեւ Ադր. Պոլսոյ ռուսական հիւպատոսն և քաղաքիս Ռուսիոյ փոխ-հիւպատոսը, Իտալիոյ փոխ-հիւպատոսը, և այլ օտարազգի պատուաւոր հիւրեր։

Խաչահանգիստը կատարուեցաւ Ս. Թադաւորի բեմին վրայ՝ քահանայից և դպրաց ներդաշնակ և քաջալեր երգեցողութեամբը։

Եկեղեցւոյ աւարտման՝ պետական և օտարազգի հիւրերը մեծարուեցան Դեր. Տ. Հմայեակ Սրբազանի և թաղական խորհրդոյ կողմէն արժանավայել մեծարանօք։ ՈՒԽՏԱՒՈՐ

ԲԱՂԱԲԱԿԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՊՈՒԼԿԱՐԱՅ.— Բաց ի ռուսական թերթերէն, ամեն եւրոպական լրագիրք կը շարունակեն նպաստաւոր հրատարակութիւններ ընել Պուլկարիոյ Արուեստահանդէսին վրայ։ Նոյն իսկ ֆրանսական լրագիրք որք այնքան խստիւ խօսած էին Պ. Սթամպուլովի դէմ՝ այս առթիւ իրենց լեզուն կը մեղմեն։ Անգլիական, գերմանական և աւստրեան լրագիրք հեռագրեր կը հրատարակեն Փիլիպէի խաղաղաւէտ ցոյցին վրայ։ Սա Թայմ կը հեռագրուի թէ Օսմ. ներկայացուցիչ ձեմալ պէյ Պ. Պոլիս դառնալէն առաջ Ֆերտինանտ իշխանին հետ տեսակցած լինելով, իշխանն իւր հաւատարմական և երախտագիտական զգացումներն յայտներէ Օսմ. երկրագործական Պանքայի Տնօրէնին՝ Ն. Կ. Վեհապառութեան մատուցանելու համար։ Պուլկարիոյ ամեն կողմերէն գիւղացիք կը խուժեն ի Փիլիպէ՝ Արուեստահանդէսը տեսնելու, և երբ հնձոց դաշտային աշխատութիւնք վերջանան, աւելի շատ գիւղացիք պիտի գան։ Գիւղացի ժողովրդեան աւելի մեծ հրապոյր մ'ընծայելու համար, Արուեստահանդէսի կարգադիր յանձնախումբը մեծ տօնավաճառ մը կը կազմակերպէ Արուեստահանդէսին յարակից բացօթեայ տեղ մը, ուր 50–60 տաղաւարներ տոնէն առուուած են։ Արուեստահանդէսին հրապարակներէն մին պիտի լինի ընդհանրութեան հրապարակային ցոյցերու շարք մը։ Ռոտոսի Փոմաք դաւառէն մի քանի համբաւաւոր ըմբիշներ պիտի գան, (այս լեռնականք մահմէտական են և քաջութեամբ նշանաւոր,) և Պուլկարիոյ ամեն կողմէ եկած քաջերու ապարէզ պիտի կարգան, ինչպէս Փոքր Ասիոյ քաղաքաց մէջ սովորութիւն է տօնավաճառներու առթիւ։ Մակեդոնիոյ մէջ Տրամա քաղաքէն թուրք ըմբիշ մը եկաւ, և իւր ֆիզիքական ձիրքերն ի հանդէս կը բերէ այս երեկոյ (սեպտ. 1ին) մեծ դումարման մը մէջ, ուր իշխանն ալ ներկայ է։ Օգս. 31ին տեղի ունեցաւ Պուլկարիոյ մէջ առաջին անգամ պատահած օդապարիկի վերելքն, Արուեստահանդէսի հրապարակէն, և ահագին բազմութիւն մը ակնապիշ դիտեց։ Օտարազգիներուն հանգստեան համար մասնաւոր տնօրինութիւնք եղած են Պուլկարաց կողմէ։

—Այս մասին երէկ իրիկուն եկած հեռագիր մը հետեւեալ ծանօթութիւնը կուտայ։

Փիլիպէ, 5 սեպտ.—Երէկ իրիկուն ժամ 6ին Արուեստահանդէսի պարտիզին մէջ ֆրանսացի օդանաւորդ Կոտառ և Ճարտարապետ Մէյէր երկրորդ անգամ վեր ելան ի ներկայութեան խուռն բազմութեան։ Վար իջնելու պահուն, օդապարիկին երկրին կառչող չուանը բրթաւ, և օդապարիկն սկսելով վեր ելնել, մի քանի վայրկեան յետոյ բոլորովին կորաւ տեսութենէ։ Որովհետեւ նոյն պահուն հովը կ'ըլլէր փչել, սաստիկ մտահոգութեան մէջ ինկաւ ամեն ոք։ Այս առաւօտ առնուազ լուրերէն կ'երեւի թէ օդապարիկը վար իջած է Թաֆար-Փապարճզի արեւմտեան կողմն երեք քիլոմէտր հեռի։

—Մինչեւ երէկ իրիկուն, 31,266 այցելուք մտան արուեստահանդէսն, և բաց ասելի, զորաց համար 25 000 ֆրի մուտք նշանակուած են։ Այս գումարներ եւրոպեան Արուեստահանդէսներու գումարներուն հետ չեն կրնար բաղդատուիլ թէեւ, բայց կը ցուցնեն թէ պուլկար ժողովուրդն անտարբեր չէ իւր անդրանիկ Արուեստահանդիսին։

ԽԱՂԱՂԱՍԻՐԱՑ Խորհրդական ժողովն, իբրեւ արդիւնք իւր եղբակացութեանց, զուիցերիայի պատգամաւորներուն ներկայած սա բանաձեւն ընդունեց։

«Այս Խորհրդարանական Համաժողով ներկայացուցիչն է խորհրդական մարմնոյ որք կազմուած են կամ դեռ կրնան կազմուիլ իրենց Կառավարութեանց ճանչցնել տալու համար սա սկզբունք թէ Պետութեանց մէջ ծագած գժտութիւնք (փոխանակ պատերազմի) պէտք է ներկայացուին իրաւարար ատեաններու ի վերջնական լուծումն։

«Ուրիշ միջազգային հանրագուտ խնդիրներ լուծելու համար, ժողովս կը հաստատէ մնայուն դիւան մը, Միջազգային Խորհրդարանական Իրաւարար Ատեան անուամբ, ի Պերն։

«Այս դիւանին տնօրէնը պիտի ընտրուի տուիրակներուն կողմէ քառամեայ պաշտօնով, և վերընտրելի պիտի ըլլայ։ Դիւանին պարտաւորութիւնք պիտի լինին։ Զանազան խորհրդարանական խաղաղասէր մարմնոց արձանագրութիւնը բռնել։ ամեն Խորհրդարանաց ուղղութիւնն հետ յարաբերութեան մտնել։ ամեն երկրաց մէջ այսպիսի մարմնոց կազմութեան համար։ պարբերաբար Համաժողովներ կազմել և անոնց եզրակացութեանց գործադրման հետամտիլ։ Խորհրդարանական մարմնոց մէջ միջնորդ լինել փոխադարձ յարաբերութեանց համար։ իրաւարարութեան և խաղաղութեան պահպանման վերաբերեալ ամեն վաւերագրեր ժողվել և պահել և ընդհանրապէս ի գործ դնել ամեն յարմար միջոցներ՝ Համաժողովոյն խաղաղասէր նպատակն յառաջ վարելու համար։

«Այս Դիւանին ծախքը պիտի հոգան խորհրդարանական մարմինք՝ իւրաքանչիւրն իւր ներկայացուցած երկրին բազմամարդութեան համեմատութեամբ։ Այս որոշմանց գործադրութիւնը կը յանձնուի Զուիցերիոյ Դաշնակցային Ժողովոյ անդամներէն հինգ հոգւոյ։»

Ժողովն որոշեց նաեւ որ Տէրութիւններէն խնդրուի առեւտրական ամեն դաշնադրելցի հլու աչկերտ մը ըլլալ, յօգուտ ի կիր առնելու համար վարպետիս հմտալից դասերը։ Ես ոչինչ էի, և դուք էք, պարոն կոմս, որ դիս այս վիճակին բերիք, ձեզ կը պարտիմ այն կարողութիւնները զոր կը բարեհաճիք վերադրել ինձ։

—Մի չափազանցէք, Ժօրժ, ձեր ուսեցածը, ձեր ոտացածը կը պարտիք ձեր խելամտութեան ու աշխատութեան։

—Ձեր տնօրինութեան ներքեւ մանաւանդ, պարոն կոմս։ Վերջապէս ըրի ամեն ինչ որ ինձ կախում ունէր արժանի ըլլալու համար իմ տիրոջս, և իմ ամենէն բուռն բաղձանքներէս մին է, պարոն կոմս, առիթը գտնել ձեզ ապացուցանելու թէ մինչեւ ո՛ր աստիճան անձնուէր եմ ձեզ։

—Այդ առիթը պիտի գտնէք, Ժօրժ, յարեց կոմսը ժպտելով, և թերեւս ձեր կարծածին չափ հեռի չէ։ Բայց մեր խօսակցութեան նիւթէն կը հեռանանք կոր։ Այժմ դառնանք գէնց Մառի-Մատըլէնին միացնելու գաղտնարին զոր առաջին անգամ ունեցաւ տիկին տը Ֆրէֆոն և որուն համախտ եմ այժմ ես ալ։

—Կնանքիս երջանկութիւնը պիտի ըլլար այդ, պարոն կոմս, երբգեալ երջանկութիւնը, բայց։ . . ։

—Բայց մայդ չուզեր, միտքդ բացատրէ։

—Ձեմ գիտեր թէ ի՞նչ պիտի պատասխանէ Մառի-Մատըլէն, պարոն կոմս։ բայց ընդունելով որ անիկա չմերժէ զիս, ոչպէս կը յուսադրէք, քնաւ չեմ տեսներ ի՞նչպէս պիտի կրնանք իրարու հետ հաշտեցուցնել ամեն պարագայները եթէ, քիչ չատ մօտաւոր ժամանակի մը մէջ, ա՛լ պէտք չունենանք իմ ծառայութիւններուս։

(Շարունակելի)

—)(136)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԷՄԻԼ ՌԻԹՊՈՒՌ

ՍԱՆՏՐԻՅԵՈՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԹՇՈՒԱՌԱԿԱՆՆԵՐԸ

—Կարծեմ, պարոն կոմս, որ տարին ուրթն հազար ֆրանք . . .։

—Բաւական չէ, բարեկամս. գործարանին տնօրէնը տասներկու հազար ֆրանք թոչակ պիտի ստանայ առաջին չորս տարիները և ապա, եթէ իր շնորհիւ ձեռնարկը բարգաւաճի, աւելի թոչակ. բայց, այն ատեն, ընկերակցելով, ինձ հետ պիտի մասնակցի գործին շահերուն։

Երիտասարդը մեծարանօք խոնարհեցաւ։ Կարելի էր կարդալ իր դէմքին արտայայտութեան մէջ տիրողը վրայ իր սքանչացումը, այս ճշմարիտ մեծ տիրոջը վրայ։

—Սիրելի Ժօրժս, յարեց Պ. տը Ռլէռֆոն քանի մը վայրկեան լռութենէ ետք, կ'ուզէ՞ք որ քիչ մըն ալ ձեր վրայ խօսինք հիմակ։

—Ի՞մ վրաս, պարոն կոմս։

—Ձեր վրայ, երիտասարդ բարեկամս, ձեր ապագային վրայ. ինձ կ'երեւի թէ ժամանակ է որ անոր վրայ խորհիք. վասընզի վերջապէս յաւիտեանս յաւիտենից ինծի հետ չպիտի մնաք։

Երիտասարդն յոյժ տժգունեցաւ և կոմսին երեսը նայեցաւ տեսակ մը մտրոմումով։

—Օ՛ն, մի խռովիք, ըսաւ կոմսը։ Գիտէք որ չպիտի բաժնուիմ ձենէ մէկէնմէկ, բայց եթէ այս բան անհրաժեշտ ալ չըլլայ, դուք ոչ նուազ մտածելու էք կացութեան մը տէր ըլլալու՝ եթէ ոչ լաւագոյն իմ մօտ ունեցած կացութենէն, գէթ աւելի ապահով. մարդ կրնայ գիտնալ թէ ի՞նչ կը պատահի. կրնայ ըլլալ որ ինձմէ զրկուիք, բարեկամս։

—Օ՛ն, պարոն կոմս, ի՞նչ կ'ըսէք։

—Ամենքս ալ մահկանացու ենք, Ժօրժ։ Բայց, հաւատացէք որ միմիայն ձեր շահուն համար կը խօսիմ։ Ինչպէս քիչ մը առաջ կ'ըսէիք, բաղաթիւ յարաբերութիւններ ունիմ և երբեմն օգուտ կը քաղեմ անոնցմէ՝ բարեկամներուս համար. առանց ձեզ խօսած ըլլալու, արդէն լրջօրէն զբաղած եմ ձեզմով։

—Ուրեմն իրա՞ւ է թէ պարոն կոմսը կ'ուզէ անցնիլ իմ ծառայութիւններէս, ըսաւ երիտասարդը դողդող ձայնով։

—Մի՛ արհամարհէք դիս դիտումներուս մասին, որ ձեր հանդարտութիւնը վրդովելու հանգամանք չունին, յարեց Պ. տը Ռլէռֆոն ծանրօրէն. անգամ մըն ալ կ'ըսեմ, Ժօրժ, ձեր ապագային վրայ է հոգս։ Եւ նախ, կեցէք, կուզեմ ամուսնացած տեսնել զձեզ։

—Բայց, թոթովեց երիտասարդը։

—Բնականութիւն տարեկան էք. ճիշտ տարիքն է։ Անցեալ տարի, երբ ամուսնութեան վրայ կը խօսէի ձեզ, կը սկսէիք խնդալ, հիմակ չէք խնդար։ Ոչ, գլուխնիդ կը խոնարհէք մեծ ցաւ մը պէս։ Քիչ մը առաջ ժտգունեցաք և ահա կը կարմրիք։ Սակայն, գիտէք որ գուշակեցի ձեր սիրելի գաղտնիքը։ Ժօրժ, աղջիկներուս վարժուհին կը սիրէք, այն մանկամարդ և սիրուն Մառի-Մատըլէնը որուն կապուած է կոմսուհին ինչպէս ես կապուած եմ ձեզ։

—Այո, պարոն կոմս, կը սիրեմ զայն։

—Լաւ ուրեմն, կ'երեւի թէ ձեզ համար եկած է իմ մտնարաժէ։ Ժօրժ, ահա ձեզ պէտք եղած ընկերը. թէ՛ ինձ և թէ կոմսուհւոյն հաճելի պիտի ըլլայ ձեր կինը տեսնել Մառի-Մատըլէնը։ Գիտէ՞ք որ զինքը կը սիրէք։

—Զի գիտեր, պարոն կոմս։

—Թէեւ իր ակնարկը թաքնցած է մինչեւ ձեր սրտին խորը։ Այսպէս, թէեւ չատ անգամ առիթը գտած էք, բայց չէք համարձակած խօսել իրեն ձեզ ներշնչած սիրոյն վրայ։ կը հաստատեմ. երիտասարդներ ունէիք, սէրը որքան անկեղծ է, զայն զգացողն այնքան երկչոտ կ'ըլլայ։

—Օ՛հ, այո, երկչոտ և վախկոտ եմ։ Բայց ա՞նքան երջանիկ եմ զայն դաղտնապէս սիրելու։ բոլորովին յոյսով չմնուած երջանկութիւն մըն է։ և եթէ, մինչեւ հիմա չեմ խօսած իրեն սիրոյս վրայ, պատճառն այն է որ կը վախնամ անուշ երազս նուազիլը տեսնելէ . . . Եթէ մերժէր զիս, եթէ պատասխաներ. «Ձեմ սիրեր զձեզ, երբէ՛ք չպիտի սիրեմ զձեզ . . .» կը թուի ինձ թէ մահուան վճիռս պիտի ըլլար այդ։ Ահա թէ ինչո՛ւ բռնութիւն կը բանեցունեմ սրտս վրայ և չուրթերուս վրայ կը բռնեմ կիրիչ խօսքերը։ Ա՞նքան կը սիրեմ ինձ պահել իմ յոյսս։ Ցուսալ՝ ապրիլ գեղ է, յուսահատիլ մեռնիլ է։

—Սիրելի Ժօրժս, պատասխանեց կոմսը, պէտք պիտի ըլլայ հաղորդել Մառի-Մատըլէնի ձեր զգացումներն իր նկատմամբ. ձեր երկիւղները չափազանցեալ կերեւին ինձ չըսելու համար անոնք։ չեմ գիտեր ի՞նչ պատասխան պիտի տայ մեր մանկամարդ վարժուհին. բայց, թերեւս, այն բառերը որք երկար ատենէ ի վեր կ'այրին ձեր շուրթերը, ձեր կարծածէն աւելի ազդեկ ընդունելութիւն գտնեն։

Երիտասարդը գլուխն երերցուց։

—Ինչ որ դիս բռնած է, պարոն կոմս, ըսաւ, ինչպէս քիչ մը առաջ կ'ըսէիք, ապահով վիճակ մը չունենալս և Օր. Մառի-Մատըլէնին ազատ չըլլալն է, իր սանուհիներուն կը պատկանի ան։

—Արդարեւ, յարեց կոմսն աչխուժիւ, եթէ օրիորդ Մառի-Մատըլէն, ձեզ հետ ամուսնանալով, իմ աղջիկներուս վարժուհին ըլլալէ դադրի, կոմսուհին և ես հաճութեամբ չենք կրնար տեսնել այս ամուսնութիւնը։

«Լիւսիէն և Բօլին այնքան սերտիւ կապուած են իրենց վարժուհիին որ զայն անոնցմէ բաժնել մեծ վիշտ պիտի պատճառէր աղջիկներուն։ յանձին Մառի-Մատըլէնի երկրորդ մայր մը կը գտնեն, այն ատենն որ յաճախ, կոմսուհին առանց նախանձոտ երեւնալու, «մայրիկ» կանուանեն զայն։ Տիկին տը Ռլէֆոն ինքն ալ իր բարեկամուհին ըրած է զայն, քրոջ պէս կը սիրէ։ Ան և դուք, Ժօրժ, մասն կը կազմէք մեր ընտանիքին, և թէ կոմսուհին և թէ ինձ այնպէս թուած է որ եթէ Մառի-Մատըլէնին հետ ամուսնանաք, մեր մտերմութեան կապերն աւելի պիտի սեղմուէին։

—Ձեր խօսքերը խորապէս կը յուզեն զիս, պարոն կոմս, և սրտիս մէջ եղած բոլոր երախտագիտութիւնս չեմ կրնար յայտնել։

—Օ՛հ, ես գիտեմ որ դուք ապերախտ մը չէք, բարեկամս։

—Մեծ սէր ունիմ ձեր վրայ, պարոն կոմս, այդ սէրն հիմնուած է ձեր բնաւորութեան մասին իմ սգանչացումիս և ձեր անձին նկատմամբ իմ խորին յարգանքիս վրայ։

—Ժ՛օ՛րժ, Ժ՛օ՛րժ։

—Շատ բան ըրած էք ինձ համար, պարոն կոմս։

—Ձեզ ըրածիս վրայ մի խօսիք, բարեկամս, թանկագին աչխատակից մը եղած էք ինձ և, արգարեւ, ե՛ս աւելի չատ բան կը պարտիմ ձեզ քան դուք ինձ։

Երիտասարդը գլուխը երերցուց։

—Ոչ, պարոն կոմս, ոչ, պատասխանեց, եթէ քիչ մը օգտակար կրցած եմ ըլլալ ձեզ, պատճառն այն է թէ, ճանչնալով ձեր բոլոր բարեսրտութիւնները, ուզեցի հլու աչկերտ մը ըլլալ, յօգուտ ի կիր առնելու համար վարպետիս հմտալից դասերը։ Ես ոչինչ էի, և դուք էք, պարոն կոմս, որ դիս այս վիճակին բերիք, ձեզ կը պարտիմ այն կարողութիւնները զոր կը բարեհաճիք վերադրել ինձ։

—Մի չափազանցէք, Ժօրժ, ձեր ուսեցածը, ձեր ոտացածը կը պարտիք ձեր խելամտութեան ու աշխատութեան։

—Ձեր տնօրինութեան ներքեւ մանաւանդ, պարոն կոմս։ Վերջապէս ըրի ամեն ինչ որ ինձ կախում ունէր արժանի ըլլալու համար իմ տիրոջս, և իմ ամենէն բուռն բաղձանքներէս մին է, պարոն կոմս, առիթը գտնել ձեզ ապացուցանելու թէ մինչեւ ո՛ր աստիճան անձնուէր եմ ձեզ։

—Այդ առիթը պիտի գտնէք, Ժօրժ, յարեց կոմսը ժպտելով, և թերեւս ձեր կարծածին չափ հեռի չէ։ Բայց մեր խօսակցութեան նիւթէն կը հեռանանք կոր։ Այժմ դառնանք գէնց Մառի-Մատըլէնին միացնելու գաղտնարին զոր առաջին անգամ ունեցաւ տիկին տը Ռլէֆոն և որուն համախտ եմ այժմ ես ալ։

—Կնանքիս երջանկութիւնը պիտի ըլլար այդ, պարոն կոմս, երբգեալ երջանկութիւնը, բայց։ . . ։

—Բայց մայդ չուզեր, միտքդ բացատրէ։

—Ձեմ գիտեր թէ ի՞նչ պիտի պատասխանէ Մառի-Մատըլէն, պարոն կոմս։ բայց ընդունելով որ անիկա չմերժէ զիս, ոչպէս կը յուսադրէք, քնաւ չեմ տեսներ ի՞նչպէս պիտի կրնանք իրարու հետ հաշտեցուցնել ամեն պարագայները եթէ, քիչ չատ մօտաւոր ժամանակի մը մէջ, ա՛լ պէտք չունենանք իմ ծառայութիւններուս։

(Շարունակելի)

գրերու մէջ նշանակել որ վէճի առարկայ այսուհետեւ իրաւարար ատեաններու յանձնուին։

Կեդրոնական Խորհրդարանական Դիւանը գերմանացի, անգլացի, ֆրանսացի, աւստրիացի, իտալացի, հոլանտացի, սպանիացի, ռումանիացի և նորվեկիացի մէկ մէկ անդամէ բաղկացեալ է։ Յաջորդ Համաժողովը ի Քրիստիանիա (Նորվեկիա) տեղի պիտի ունենայ գալ տարի։

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ.—Պերլինի լրագիրը իրենց սովորական յօդուածները կը հրատարակեն սեպտ. 2 Սըտանի յաղթութեան տարեդարձին առիթ։ Կ'ըսեն թէ ցորչափ Ֆրանսա իրրեւ վերջնական չճանչէ Ֆրանքֆորդի դաշնագիրն, որով 1871ին Գերմանիոյ թողուց զԱլզաս-Լոռէն, Գերմանիոյ և Ֆրանսայի միջեւ հաշտութիւն անկարելի է։ Գերմանիա պարտի զէն ի ձեռին պարասս կենալ, ամէն վայրկեան պաշտպանելու համար թէ իւր ազգային միութիւնն և թէ վերագրաւեալ Ալզաս-Լոռէնն։—Աւստրիկ չաս ցուրտ մեկնութիւն մը Պէրլի խաղաղասիրական խորհրդակցութեանց և եղրակացութեանց վրայ։

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ հիւսիսակողմը գտնուող Սեւ Լերան բնակիչները չեն ուզեր Անգլիացոց յանձնել կամ իրենց երկրէն վանել վերջին շարժման պարագլուխ, Հաշիմ Ալի, ցեղապետ Հասանզայիներու։ Հետեւապէս, Գնդ. Լոքարդ 4,000 զօրքով կը քալէ Սեւ Լեռնցւոց վրայ, զոր պիտի պատժէ և շարժման պատճառ ձեռք պիտի անցուցնէ։ Այս մարգիկ իրենց ինքնուրոյն գլխքը պահել կ'ուզեն, բայց անզլուխնդիկ կառավարութիւնը կը խորհի թէ Հնդկաստանի սահմանագլխին մօտ այնպիսի կարեւոր գիրքի մը ինքնուրոյն կացութիւնը կըլլայ վտանգ մ'ըլլալ երկրին ապահովութեան և պաշտպանութեան ընդդէմ ներքին և արտաքին յարձակմանց։

ԱՖՂԱՆԱՍՏԱՆԻ դէպքերուն դէմ զգոյշ գտնուելու համար, Հնդկաստանի կառավարութիւնն իւր Ա. զօրաբանակը զէնքի տակ առնուլ որոշեր է։ Արդէն քանի մը գունդեր ճամբայ եղած են դէպ ի սահմանագլուխ։

ԱՆԳԼԻՈՅ ԵՒ ՌՈՒՍԻՈՅ միջեւ թէպէտ ասական խնդիրը բաւական չփոթ վիճակ մ'ունին, բայց գիտելի է որ Սակարանը շատ չէ ազդուած, և անգլ. և ռուսական արժեթուղթք անկում չեն կրած։

ՄԱՐՈՒՐԻ ապստամբաց յատակացեալ նորաձեւ հրացաններով լեցուն մեծ սալ մը բռնուեցաւ անցեալ շաբթուն ի Մալակա։ Թանձերէ կը հեռագրուի թէ Մարոքի զօրքերը ծանր կորուստ կրեցին Անկերայից հակառակորդ ցեղին հետ իրենց վերջին պայքարներուն մէջ, և վիրաւորեալք կը դարմանուին մարոքեան բանակատեղւոյն մէջ ի սուտ ապաստանի բերեալ։ Ոչ այս զսպող մարոքցի զօրաց երեսատպիտութիւնը կը շահին։ Շարժման պետ Համմամ իրրեւ լեզուաբ նամակ մ'ուղղեց զօրաց ընդհանուր հրամատար ին, սպառնալով ինքն ալ գլխատել իւր բռնած գերի զինուորներն, եթէ մարոքեան զինուորական իշխանութիւնք չարունակեն գլխատել իրենց բռնած Անկերանցիները։

ՌՈՒՍԻՔ Պէհրինկի ծովուն մէջ Պղենձի կղզւոյն հանդէպ գրաւեր են քանաւեան մի քանի նաւեր որք անպէտ զրօշի տակ ծովակորթ կ'որսային։ Ենուք կ'սարակին թէ Քանատացիք իրաւունք չունին այն ջուրերուն մէջ բան որսալու։ Բայց Ռուսք Քանատացւոց հետ շատ գէշ վարուեր են։ Ազատ տեղեր քանտարկեր են, և քանի ստորագրութիւն առեր են թէ ռուսական ջուրց մէջ կ'որսային։ Քանատացիք բուռն զայրոյթ կը ցուցնեն, և անգլ. զրօշին դէմ եղած այս անարգանքին համար գոհացում կը պահանջեն։ Ահա նոր զգլխոցաւ մը։ Գ. Կլատսթոնի համար, որ կ'ուզեր Ռուսիոյ հետ ազէկ երթալ, և ամէն կողմէ վէճք կը ծագին Ռուսիոյ հետ։

ԱԶԳԱՅԻՆ

ԼՈՒՐԵՐ

ՎԵՐԱՇԵՆՈՒԹԻՒՆ ԴԱՍԲԳԻՒՂԻ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ

Կը լսենք թէ Դասը գիւղի Ս. Թադեայ եկեղեցւոյն վերաշինութեան խնդիրն այս օրերս լրջօրէն ձեռք առնուած է։ Ցաւալի է թէ այս գիւղական եկեղեցի բոլորովին նեղ կուգայ տեղւոյն աճեցուն բազմութեան։ Օրինաւոր վախք մըն է որ կը տածուի Դասը գիւղն օժտելու համար իւր ընկերային այժմեան դրից համապատասխան սրբավայրով մը։ Երբ խորհինք թէ Սկիւտարի հրկիզեալ Ս. Կարապետ եկեղեցւոյն մասնակի վերաշինութիւնն եւեթ 5,000 ոսկիէն աւելի ծախք պատճառած է Վեմ. Նուիրատուն, զարմանալի չէ որ իբր 10,000 ոսկի ծախք մը գուշակուի Դասընդիւղի եկեղեցւոյն վերաշինութեան համար։ Եթէ սորոյ է լսածնիս, այս գումարին կէսը կը յօժարին իրենց անձնականէն հայթայթել Վեմ. Ոնճեան հարազատ, եթէ միւս կէսը Դասընդիւղի Հայոց երեւելիք ստանձնեն հայթայթել հանգանակութեամբ։

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Տրապիզոնի նորընտիր առաջնորդ Գեր. Եղիշէ Մ. վարդապետ Այվազեանի պաշտօնը վաւերացնող կայս. Պէրատին երէկ յանձնուեցաւ ի Պատրիարքարան։

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն երէկ թէ այդ Պէրատին և թէ Պատրիարքական Կոնդակը յանձնեց Գեր. Եղիշէ վարդապետի, օրհնելով զինքն և յաջողութիւն մաղթելով։

Ն. Դերապատուութիւն ի մօտոյ իւր պաշտօնատեղին պիտի ուղեւորի։

ՀՆՏԱԽՕՏ Ի ԹԻՖԼԻՍ

Թիֆլիսէն սեպտ. 5 թուով (Ն. Տ.) Աչեէլի խաղաղութեան ուղղեալ հեռագիր մը կը ծանուցանէ թէ չորս օրէ ի վեր հնտախտ ո և է դէպք պատահած չէ Թիֆլիսի մէջ։ Այս առիթիւ գոհաբանական աղօթք մատուցուած են եկեղեցեաց մէջ և ամէն եկեղեցիք ուրախարար բացուած են։

ՄԱՀ ԲԱՄԱՌ ԲԱԹԻՊԱՅ

Բեգրոպուրկէն մայրաքաղաքս հասած մանաւոր հեռագիր մը ցաւոք սրտի կը գուժէ թէ քանասեղծ Բամառ Բաթիպա(Պատկանեան), որ ժամանակէ մը ի վեր հիւանդ էր, մեռեր է և յուղարկաւորութիւնը մեծահանդէս պիտի կատարուի։

Եալովայի Շագ-Շագ գիւղէն կը գրեն թէ Ս. Փրկչ Ազգային Հիւանդանոցի ընդհանուր համարակալ Մեծ. Գրիգոր էֆէնտի Թնկրեան՝ ի յիշատակ իւր ողբացեալ մօր՝ Տիկին Եւլիմէի՝ մի զանգակ նուիրեր է տեղւոյն Ս. Նիկողայոս եկեղեցւոյ, ուր այս առթիւ՝ ի հանդիսս հոգւոյ քարեպաշտուհի տիկնոջ՝ հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեր է։

ԱԶԴ

Բերայի հայ իգական սեռի Արուեստագիտական վարժարանի ուսումնական եւ արուեստական ճիւղերու 6րդ տարեշրջանի վերաբացումը տեղի պիտի ունենայ ամսոյս 31 երկուշաբթի օր։

Կը խնդրուի արգոյ ծնողքներէ և պաշտպաններէ որ բարեհաճին իրենց զաւակաց և պաշտպանելոց վերամուտի արտօնագիրն ստանալ ի Թաղական Խորհրդարանէ Բերայի։ 197 1—1

[redacted]

Խիտասվէրտեան, Ս. Շամանճեան, Բաբաղեան, Հիւսէյնճեան, Բարաճեան, Փորմուգալեան ընտանիքներն իրենց շնորհակալութիւնը կը յայտնեն ամէն անոնց, որք հաճեցան ներկայ գտնուիլ հանգուցեալ ԱՆԴՐԱՆԻԿ Լ.Ֆ. ԽԻՒՏԱՎԷՐԵԱՆի յուղարկաւորութեան տխուր հանդէսին և այս առիթիւ իրենց ցաւակցութիւնը յայտնողաց։ 198

[redacted]

ՔԱՂԱՆԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ Ի ՊՐՈՒՍԱ ԿԸՆԴՈՒՆԻՆ ԴԻՇԵՐՕԹԻՒՆԵՐ։ 169 10—12

Անոյշ Լուրեր

ՊԱՇՏՕՆԱԿԱՆԵՐ.—Այրընի Սարայքեայ գաւառակին գայմագամ անուանեցաւ Մեհմէտ Լէմին էֆէնտի, նախորդ մասնագէտ անօրէն արքունի կալարարին։

Էնկիւրիի Եագանագա գաւառակին գայմագամ անուանեցաւ Նէշէթ էֆէնտի, գայմագամ Բէսքիրի, և իրեն յաջորդեց Ալբրկի պէյ, գայմագամ Եագանագամի։

Տիարպէքիրի Սեւերեկ գաւառակին գայմագամ անուանեցաւ Բասիլ էֆէնտի, գայմագամ Ձեղիրեի, և իրեն յաջորդեց Մուսթաֆա Սաֆվէթի էֆէնտի, գայմագամ Սեւերեկի։

Առաջին կարգի Մէճիտիէ պատուանշան տրուեցաւ Թէնէկէքիի Բէժիին ընկերութեան անօրէն Պ. Զօկէպի։

Հինգերորդ կարգի Մէճիտիէ գերմանացի հրացանագործ Պ. Շմիտի։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՄՈՒՆԵՐ.—Սելանիկի կուսակալութիւնը տեղեկագրած է Ներքին գործոց Նախարարութեան թէ Վեհ. Սուլթանի գահակալութեան տարեդարձի օրն կառավարական պաշտօնատան մէջ շքեղ ընդունելութիւնք կատարուեր և կրօնական, քաղաքային ու զինուորական պաշտօնեայք՝ ամէնքն ալ համազգեստով՝ շնորհաւորութեան գնացեր և բարեմաղթութիւններ ըրեր են վասն կենաց Վեհ. Սուլթանին։ Ընդունելութեան պահուն զինուորական նուագածուայ խումբ մը ինչպէս նաեւ Համիտիէ վարժարանին նուագածուայ խումբն անընդհատ նուագեր են։ Քաղաքին պաշտօնատունք, մասնաւորաց տուները և նաւահանգստին մէջ գտնուող նաւերն գրօշներով զարդարուեր և պահակ շքեղնաւն միջօրէին քսան և մէկ թնդանօթներ արձակեր է։ Դիշերն ալ շքեղ լուսավառութիւնք, հրախաղութիւնք և խրախճանութիւնք կատարուեր են։

—Քաղաքապետութիւնը տեղեկագրած է Ներքին գործոց Նախարարութեան թէ Թաղապետութեան Բ. Դ. Ը. և Թ. շրջանակաց մէջ խաներ ու խանութներ մաքրուած, տպանեխական դեղեր թափուած և հանրային առողջութեան վնասող պտուղներ ծովը նետուած են։

—Հնտախտի դէպքերու վրայ Տրապիզոնի կուսակալութիւնն հետեւեալ հեռագիրն ուղղած և Առողջապահական վարչութիւնն այ հետեւեալ տեղեկագիրն մատուցած է կայս. պալատան առաջին քարտուղարութեան։

ՊԱՏԱՅԷՆ ՀԵՌԱԳՐՈՅ

Երէկուընէ մինչեւ այսօր ևս թէ Բլաթանի մաքրանոցին ու գիւղաքաղաքին, թէ միւս մաքրանոցներուն և թէ նահանգին ուրիշ կողմերուն մէջ տարփոխիկ հիւանդութեանց ո և է դէպք չէ պատահած։ Քարանթինի շքեղային պահապան զինուորաց ու ոստիկան-զինուորաց առողջական վիճակը գոհացուցիչ է։

Տրապիզոնի կուսակալ

25 օգոստ. ԳԱՍՐԻ

ՊԱՏԱՅԷՆ ՏԵՂԵԿԱԳՐՈՅ

Կարնոյ կուսակալութեան և քարանթինայի քննիչին կողմէ 24 օգոստոս թուականաւ եկած հեռագիրը ծանուցած են թէ Բասէն գաւառակի կեդրոնէն՝ Հասանգալէ գիւղաքաղաքէն՝ շորս ժամ ու նահանգին կեդրոնէն 11 ժամ հեռաւորութիւն ունեցող Իլեֆքիւրէք, Թօթը և Վէլիպապա գիւղերուն մէջ հնտախտ ծագելով, օգոստոս 22ին առաջին գիւղին մէջ չորս կիներ ու երրորդ գիւղին մէջ երկու մարդիր մեռեր են։ Այդ գիւղեր շքեղային ներքեւ առնուելով արտաքին յարաբերութիւնք արգիլուեր են։ Այդ գիւղին ու Կարնոյ միջեւ եղած ճամբան փակուած է և հարկ եղած առողջապահական միջոցները ձեռք առնուած են։ Կէօնիկի մաքրանոցին մէջ առաջուան երկու վարակեալներէն զատ զինուոր մը մեռեր է հնտախտէ։ Ի Հասան Գալէ շքեղային ներքեւ առնուած տեղերու մէջ օգոստոս 23ին ո և է դէպք չէ պատահած։ Բասէն գաւառակի Բէօբրի գիւղին մէջ երկրորդ շքեղայ մը ու մաքրանոց մը հաստատելու համար հարկ եղածը ծանուցուած է ձեռնհաս պաշտօնէից։

Ադրիանուպոլսոյ կուսակալութենէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ ի Ճիսրը Մուսթաֆա Փաշա՝ երկաթուղիով եկող ուղեւորք բժշկական քննութեան ենթարկուած են և առողջական վիճակին խիստ գոհացուցիչ տեսնուած է։

Վանայ կուսակալութիւնն ևս հեռագրած է թէ Մահմուտիէյէ մաքրանոցին ու գաւառակին մէջ հանրային առողջութիւնը գոհացուցիչ է։ Բլաթանի գիւղաքաղաքին մէջ օգոստոս 23ին ո և է դէպք չէ պատահած և մաքրանոցին մէջ զինուոր մը մեռած է։

Օգոստոս 24ին, վարակեալ տեղերէ Գավազ ժամանած են եօթը շքեղնաւ ու երկու առագաստանաւ։ Վեց շքեղնաւք ուղղակի Միջերկրական ուղեւորած են առողջապահական պաշտօնէից հսկողութեամբ։ Շքեղնաւ մը ու երկու առագաստանաւք քարանթինի պայմանաժամն ա[illegible] են։ Երեք շքեղնաւեր ու 53 առագաստանաւեր, որոց եկած տեղերուն համար բըժշկական քննութիւն որոշուած է։ Յետ քննութեան ազատ անցագիր ստացած են։ Քարանթինա սպասող մէկ շքեղնաւի մէջ գտնուող 44 նաւաստաց ու 49 ուղեւորաց առողջական վիճակը գոհացուցիչ է։ Օգոստոս 24ին, վարակեալ վայրերէ Սինոպի մաքրանոցը ժամանած են շքեղնաւ մը ու երեք առագաստանաւեր, որք քարանթինի ենթարկուած են։ Քարանթինա սպասող եօթը շքեղնաւերու ու 10 առագաստանաւերու 482 նաւաստաց, մաքրանոցին մէջ գտնուող 324 ուղեւորաց, քարանթինայի շքեղային պահապան զինուորաց առողջական վիճակն և Սինոպի ու շրջակայից մէջ հանրային առողջութիւնը գոհացուցիչ վիճակի մէջ է։

Խասան, Ունճեան և ընկերութեան «Հասէյտան» շքեղնաւն, որ եանգուէլն 584 ուխտաւորներ առած էր, ասոնց 14ն ի Սիւէզ, 138՝ ի Պէրութ, 80ն՝ յիսքէնտէրուն, 50ն՝ ի Զմիւռնիա և 13ն՝ ի Տարսանէլ հանելով, մնացեալ 285 ուխտաւորներն այսօր մայրաքաղաքս բերաւ։ Ճամբան շքեղնաւին մէջ չորս մահեր պատահած են։ Այդ շքեղնաւ աստ ժամանելուն ուխտաւորք զատ զատ բժշկական քննութեան ենթարկուած և բոլորին ալ առողջական վիճակն գոհացուցիչ տեսնուելով ազատ անցագիր արուած է։ Մաքրանոցի համար որոշեալ տեղերու մէջ այդ շքեղնաւին նկատմամբ ապահեխական, մաքրողական և նախզգուշական միջոցներն ի գործ դրուած են։

25 օգոստ. Առողջապահական ժողովոյ

—Կարնոյ կուսակալութիւնը օգոստոս 23 թուականաւ հեռագրած է թէ ի Բասէն առժամաբար քարանթինայի ենթարկեալ անձանց մէջ ո և է դէպք չէ պատահած։ Նոյնպէս թէ մինչեւ օգոստոս 18, կէօնիկի մաքրանոցին մէջ ո և է դէպք չէ պատահած։

Բասէնի գայմագամը հեռագրած ըլլալով որ գաւառակին Իլիճքիւրէք, Թօթը և Վէլիպապա գիւղերուն մէջ սաստիկ հիւանդութիւն մը երեւան եկած է, ուրկից Իլիճքիւրէք գիւղին մէջ չորս կիներ ու Վէլիպապայի մէջ երկու մարդիր մեռած են, քարանթինայի քընննչն, որ արդէն Բասէն կը գտնուի, անմիջապէս այդ գիւղերը ղրկուած է քննելու համար հիւանդութեան տեսակը ու տարափոխիկ ըլլալն կամ ոչ, քննութեանց արդիւնքը տեղեկագրելու և հարկ եղած միջոցները ձեռք առնելով ճարակումն արգիլելու և անհետացմանը համար պէտք եղածն ի գործ դրնելու համար։

Կարնոյ կուսակալութիւնը օգոստոս 19 թուականաւ հեռագրած էր թէ Ռուսիայէն վերադառնալով Կէօնիկի մաքրանոցին մէջ քարանթինա սպասելէ յետոյ Հասան Գալէ ժամանող 20 գործաւորներէ Խնուսցի Նօրսիս մեռած և այդ առթիւ հարկ եղածն ի գործ դրուած էր։ Արդ, նոյն կուսակալութեան կողմէ օգոստոս 23 թուականաւ հեռագրոյ մը նայելով յետ քննութեան հաստատուեր է թէ այդ անձ հնտախտէ մեռած է, հետեւաբար հարկ եղած հրամանները տրուած են այդ գաւառակը շքեղայի ներքեւ առնլու համար։

Ի ԿԱՅՍ. ՊԱԼԱՏ.—Բարձր. Մեծ-եպարքոսն և Իվգաֆի Վեմ. նախարարն երէկ կայս. պալատ գնացին և ստացան Վեհ. Սուլթանի հրամանները։

ՅԱՆԶՆԱՀՈՂՈՎ.—Եվմոական Վեմ. նախարարին նախագահութեամբ կազմեալ յանձնաժողովն, զոր կը կազմեն Առեւտրական ու Հանրօգուտ շինութեանց Նախարար Վեմ. Թէվֆիգ փաշա, կայս. անձնական Գանձուն նախարար Վեմ. Միքայէլ էֆէնտի, օսմ. կայս. պանքայի ընդհանուր տնօրէն Սըր Էտկար Վինսընդ և եվմական այլ պաշտօնեայք, ըստ Սաբահի, խորհրդակցութիւններ կը կատարէ հարիւր հազար ոսկւոյ երկուքնոց ու քառասուն փարտնոց արծաթի մասը դրամներու պատրաստուելն համար։ իսկ ըստ Սաբահէի, պարտաթուղթերու միացման խնդրոյն վրայ։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ժողովն երէկ իւր սովորական նիստը կազմեց ընդ նախագահութեամբ Արտաքին գործոց նախարար Վեմ. Սայիտ փաշայի և որոշեց որ երկաթուղւոյ կառախումբով եկող ուղեւորք ի Ճիսրը Մուսթաֆա փաշա և Գեօյվալի նահանգին մէջ գտնուած Զիպէֆիէ անուն տեղը երեք օրուան քարանթինայի ենթարկուին և մինչեւ որ մաքրանոցի յատուկ տաղաւարներ շինուին։

Առողջապահական ժողովն այսօր ևս յարատեւողոր նիստ պիտի գումարի։

—Ճիսրը Մուսթաֆա Փաշայէն կը հեռագրեն թէ մաքրանոցի յատուկ տաղաւարներու շինութիւնը փութով առաջ կը տարուի և թէ երէկ իրիկուն Եւրոպայէն ժամանող կառախումբի ուղեւորք բժշկական քննութեան ենթարկուելով առողջապահական վիճակին գոհացուցիչ գտնուած և ապահեխական գործողութիւնք կատարուելով կառախումբն արտօնուած է ճամբան շարունակելու։

ԲԱԲԷԼ ընկերութեան Աւ-ԴՆ շոգեշնաւն երէկ առաւօտ Մարմարայէն Կ. Պոլիս ժամանեց և ստտ Քարանթինայի ենթարկուեցաւ, որովհետեւ Պաֆուէն քսան և չորս օր առաջ մեկնած էր։ Այս շքեղնաւ թէեւ Տարտանելէն ազատ անցագիր ստացած է, սակայն իբր նախզգուշութիւն նորէն քարանթինայի ենթարկուած է։

ԹԷԲԷ-ՊԱՇԷՒ ԱՐԿԱՆԸ.—Նախընթաց օր Բերայի թաղապետութեան մէջ գումարեալ յանձնաժողովը որոշած է շէնքն ամբողջովին փլցնել, որովհետեւ շէնքին արտաքին պատերը նեղ ըլլալով ու յենման կէս մը չունենալով ապիտաներն սկսած են վար թափիլ։ Երէկ ճամբուն երկու կողմն տախտակներով գոցուեցաւ և թրամուէյնեբու ու կառքերու երթեւեկութիւնը դադրեցաւ։ Այդ շէնքին յանձնառուներու և ճարտարապետներու նկատմամբ կատարուած նախնական քննութեանց տեղեկագիրը երէկ յանձնուեցան Դատական Նախարարութեան։

Թաղապետութեան հիւանդանոցին մէջ գտնուող վիրաւորեալք, տակաւին Եղլոզի հիւանդանոցը փոխադրուելու վիճակին մէջ չգտնուելով, մէկ քանի օր ևս թաղապետութեան հիւանդանոցին մէջ պիտի մնան։

Շենքին տէրն Արսլան օղլու, կրսէ Սաբահ, կատարելապէս գիտէ եղեր թէ այդ շէնքն պէտք եղածին պէս հաստատուն կերպիւ շինուելու վրայ չէ, որովհետեւ շէնքը կառուցուելէն յետոյ ուրիշին պիտի վաճառէ եղեր և այդ պատճառաւ կարեւորութիւն չէ տուեր։ Սաբահ ձեռնհաս իշխանութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ Արսլան Օղլուի նկատմամբ օրինաւոր տրամադրութիւնն ի գործ դնելու համար։

Փլատակաց ներքեւ մնացող ճարտարապետ Եորկիի վրայէն երեք հազար ոսկինոց դրամատոմար գտնուեր են և Եորկի ամուրի ըլլալով այդ դումար յանձնուած է Քաղաքապետութեան։

* * *

Ձեռնհաս իշխանութիւնը ծանուցած է որոց որ անկ է թէ թաղապետութեան երկրաչափներն պարտին քննել կառուցեալ շէնքերու արհեստին համապատասխան ըլլան կամ ոչ, որովհետեւ եթէ արկած մը և այլ պարագայ մը պատահի թաղապետութեանց երկրաչափական գիւանք պատասխանատու պիտի մնան։

ԱՒԱՆՈՒԹԻՒՆ.—Սելանիկի օսմ. Բէժիի արկղակալ-հայուակալ Պ. Վաֆօքուլը անցեալ շաբթու աւագակաց կողմէ առեւանգուեր է ի Սերֆիճէ, Սելանիկ—մանասթիրի երկաթուղւոյն վրայ, առաջին քաղաքէն դիսուն քիլոմէթրի չափ հեռի։ Աւազակք փրկագին կը պահանջեն։

ՍԱՄՍՈՆԷՆ ի Զարշամպա շոգեշարժ թրամուէյի մը շինութեան համար Աթանաս էֆ. Թեպիօղլուի կողմէ խընդրուած արտօնութիւնը շնորհուած է կայս. կառավարութեան կողմէ։ Այժմ Հանրօգուտ շինութեանց Նախարարութեան մէջ կը պատրաստուին պայմանագիրն ու յանձնառութեանց տեսրը։

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ դեսպան Պառոն ֆոն Քալիչէ հաւանօրէն յառաջիկայ շաբթու արձակուրդով պիտի մեկնի մայրաքաղաքէս դէպ ի Վիեննա։

ԵՐԿԱԹՈՒՂԻՈՅ ԱՐԿԱՆ.—Անատոլուի երկաթուղւոյ 337 րդ քիլոմէտրին վրայ պատահած արկածէն վիրաւորեալ տասներեք գործաւորներէ երեքը մեռած են։ Վիրաւորելոց չորսն անդ կը գտնուին մասնաւոր տան մը մէջ։ Ասոնց մէջ տարուելով, երկուքն աւտրիական հիւանդանոցն և միւսներն ալ Հայասար փաշայի հիւանդանոցը տարուած են։

ՀԱՄԻՏԻԵԷ հեծելազունդերն աւելի ևս կանոնաւորելու մասին հարկ եղած միջոցներն ձեռք առնլու համար կազմեալ յանձնաժողովն, ընդ նախագահութեամբ կայս. աւագ թիկնապահ Շաքիր փաշայի, իւր խորհրդակցութեանց արդիւնքը տեղեկագրով մը մատուցած է Վեհ. Սուլթանին։

ՅՈՒՆԱՑ Ամեն. Պատրիարքն, որ մէկ քանի օրէ ի վեր Թարապիոյ մետրապոլտին և Շիշմանօղլու Եուվանաքի էֆէնտիի տունը հիւր կը գտնուէր երէկ Ֆէնէր վերադարձաւ։

ՆՈՐ ԼՐԱԳԻՐ.—Կրթական նախարարութեան նախնական վարժարանաց վարչութեան երկրորդ քարտուղար Մէհմէտ Պէտրէտտին էֆէնտի ձեռնհաս իշխանութիւնէն արտօնութիւն խնդրած է «Մէնֆաաթ» անուն գրական ու քաղաքական ամենօրեայ թերթ մը հրատարակելու համար՝ հասոյթն Համազգային Անկելանոցին յատկացնելու պայմանաւ։

ՀՐԴԵՀ.—Այս առաւօտ ժամ 12 ին Օրթաքէոյի Թաշ Ներտիսան թաղը տան մը պարտէզին մէջ գտնուած քարուիր լուացարան մը այրեցաւ։

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԵՐ.—Ոստիկանութեան նախարարութիւնը տեղեկանալով որ գերեզմանատանց մէջ փոսերն պէտք եղածին չափ խորունկ չեն փորուիր և երբեմն ալ գերեզմանք բացուելով երկրորդ մեռեալ մը կը թաղուի անդ և նկատելով որ ասգ պարագայ այլեալ վնասուց տեղի կուտայ, հրահանգ ուղղած է ոստիկանութեան պաշտօնէից հարկ եղած պատուէրներն ընել գերեզման փորողներուն։

ՊՕՏՕՍԱՖԻ էֆէնտի՝ Բէժիի գործարանին գործաւորաց պետն՝ որ նախընթաց իրիկուն Ոսկեղջիւրի շոգենաւերէ միոյն մէջ վիրաւորուած էր Ալի անուն մարդու մը կողմէ, մեռեր է։

ՅՕԴԱՅԱՒԻ ԴԵՂ.—Բժշկական վարժարանի վարչութիւնը տեղեկանալով որ ի Մուտանիա գտնուած տղմուտ տեղ մը յօդայաւի համար օգտակար է, որոշեր է որ քսանի չափ այդ կարգի հիւանդներ նոյն վարժարանի օգնական-ուսուցիչներէ միոյն հետ անդ ղրկուին փորձի համար։

ԱՆՀԱՄԲՈՅՐ ԳՈՄԷԾ ՄԸ

Ձեռքի կատակը մարդոց մէջ երբեմն վտանգաւոր հետեւանքներ կ'ունենայ, ո՞ւր մնաց անասնոց մէջ։ Եէնի-Զաղարացի Իսմայիլին գոմէշը երէկ շատ ազգեցիկ ապացոյց մը տուաւ թէ իրենք՝ գոմէշները՝ կատակ չեն սիրեր, և մանաւանդ երկոտանիներու կատակը բնա՛ւ չեն սիրեր։ Ի՞նչ ըսես, բնաւորութիւն։ Եղելութիւնը սա է որ երէկ, Իսմայիլ, պատուարժան գոմէշն առջեւը ձգած վեր կ'ելնէր Ագ-Սէրայէն։ Այդ միջոցին չարաճճի մը տեսնելով վիթխարի անասունը՝ ձեռքն ունեցած գաւազանովը ուժգնակի կը խթէ զայն։ Գոմէշը, սաստիկ կատղելով այդ անհաճոյ գգուանքէն, կը ծռէ անհեթեթ գլուխը և եղջիւրներով քանկալով իր տէրը, կը նետէ մօտակայ կօշկակարի մը խանութէն ներս, և ապա կը սկսի վազել խօլ արշաւով, խորտուբուրանին բոլոր անհեթեթութիւնովը։ Ամէն մարդ ահաբեկումով կը փախչի այդ սուրացող զանգուածին առջեւէն, բայց վաթսունամեայ Միքայէլ անուն կեսարացի մը ժամանակ չուենենար ճամբայ տալու մոլեգնած կենդանիին, որ եղջիւրներովը ի բաց կը նետէ զայն թեթեւապէս վիրաւորելով։ ու կը շարունակէ իր գահավէժ վազքը՝ մանչիւններ արձակելով և ահ ու սարսափ տիրելով չորս դին։ Կը յարձակի Թրամուէյի ձիու մը վրայ եւ եղջիւրներն անոր փորը կը խօթէ։ Կենդանին կ'կնայ դիտապատ։ Կերեւայ թէ կատաղը չախորժող այդ կատաղի անասունը իր ճամբուն վրայ անընդհատ շարք մը պիտի թողուր նախիրներու, եթէ վրայ չը հասնէին ոստիկաններն ու մեծ ճիգերով չը յաջողէին բռնել այդ անզուսպ գոմէշը։

ԳՈՂՈՒԹԻՒՆ.—Կայս. պալատան բժիշկ Արիֆ փաշա երեք ամիս առաջ գնած էր Էվգաֆի պաշտօնատարներէն Ագիզ պէյի ամարանոցն ի Քիւչիւք-Զամլըճա։ Անցեալ երեքշաբթի առտու գողեր կը մտնեն կանանոցի մասին մէջ, իրարու կապուած երկու սանդուխներ կը դնեն 12 կանգուն բարձրութեամբ պատուհանի մը առջեւ, որ կը բացուի պզտիկ սրահի մը վրայ, ուր կը գտնուի փաշային ննջասենեակը։ Կալի անտուկի մը և դարակի մը մէջ եղած զգեստները դուրս հանելով թիկնոթոռին վրայ կը նետեն։

Ուրիշ մէկ քանի սենեակներու դռներն ալ այս սրահին վրայ կը բացուին, բայց գողերը չեն դպիր անոնց։ Ցետոյ, նոյն ճամբով վար կ'իջնեն և սանդուխն առնելով կը տանին կը դետնեն այն սենեկի պատուհանին առջեւ ուր կը քնանային փաշան, երկու տղաքը և աղախին մը։ Առաջին անգամ վեր ելնող գողը արդեն քառասուն հարիւրդրամներով չափ վեր առած էր պատուհանը դանակի մը միջոցաւ, երբ աղախինը թեթեւ շշուկ մը իմանալով՝ մեծագոչ աղաղակներով կ'արթնցուցէ փաշան, որ անմիջապէս՝ ըէվոլվըր ի ձեռին՝ պատուհանը կը վազէ, բայց գողն ետին դառնալով վար կը ցատքէ սանդուխէն։

Արիֆ փաշա խոյսն կրակ կ'ընէ առանց վնասելու։ Առաջին պայթման կը յաջորդեն տասնեւչորս հարուածներ դէպի պարտէզին ուղղութեամբ՝ կասեցնելու համար գողերուն փախուստը և ձայն տալու համար տան մարդոցը, վասն զի այդ պահուն մութը սաստիկ էր։ Փաշան ամենէն առաջ կ'իջնէ և հինգ վայրկեան ետքը կուգան Թօփխանէջուլուի ոստիկանութեան գօմիսէր Ապտուլլահ էֆէնտի և Բըրըքլիի գօմիսէր Հասան էֆէնտի՝ ոստիկան-զինուորներու հետ։ Նախնական քննութիւն մը կը բացուի անմիջապէս եւ կը հաստատուի որ իրարու կապուած երկու սանդուխնեբէ մին տանը կը պատկանէր։ Թիկնաթոռին վրայ սփռուած հանդերձները զոր չարագործք արհամարհած էին, քառասուն ոսկի կ'արժեն։ Նեսէն կը գողցուած սենեակին դուռը կոտրել դժուար ըլլալով, գողը փորձած էր պատուհանէն ներս մտնել, որպէս զի քնացած պահուն կողոպտէ փաշան և ապա դիւրաւ խոյս տայ։ Սրահին թիկնաթոռին վրայ գողին բոպիկ ոտքը հետք ձգած ըլլալով, խնամով կարելի են այն տեղն և ոստիկանութեան յանձներ են։

Սկիւտարի կառավարիչ Վեմ. Սապրի պէյ անմիջապէս քննութիւն բանալ տուաւ, որպէս զի պիտի հաստատուին գողերը որք կան գողերու խումբի մը վրայ, որ նախորդ Շեյխ-իւլ-Իսլամի այգեպանին կողմէ կազմուած է։ Այս խումբ ամիս մը առաջ բռնուած էր, բայց Ադիզ պէյի այգեպանին երաշխաւորութեամբն ազատած էր։ Կասկածներն այս վերջնոյն վրայ կը ծանրանան։

Արիֆ փաշա, տեսնելով որ այդ ամայի տեղը մինչեւ այսպիսի վտանգի ենթակայ է, իր բնակութիւնը քաղաք փոխադրեր է։

Կ. ՊՈԼՍՈՅ ԴԵՂԱՅԴՐԻՆԵՐՈՒ ԸՆԵՐՈՒԹԵԱՆ սովորական նիստը տեղի պիտի ունենայ սեպտեմբեր 27 ին, կէս օրէն երկու ժամ ետքը, բժշկական ընկերութեան կեդրոնատեղւոյն մէջ ի Բերա։

Ընդհ. Քարտուղար
Բրիկի Աբերի

ԱՄԱՌՆԱՑԻՆ ԹԱՏՐՈՆԻ

Ֆրանսական խումբն այս գիշեր պիտի ներկայացուցէ Լ'ՕՆՔԼ ՍԷԼԷՍԹԷՆ (L'oncle Célestin) օրէնէդ 3 արարուածով։

ՅԵՌԱԳԻՐ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

ՀՆՏԱԽՏԻ ՆՈՐԱԳՈՅՆ ԼՈՒՐԵՐ

ՊԵՐԼԻՆ, 6 Սեպտ.—Պաշտօնական.—Համպուրկի մէջ Սեպտ. 3ին 528 անձինք վարակեցան, 379ը մեռան։ Հետեւեալ օրը 501 վարակեցան, 158 մեռան։ Ի Պերլին, չարաթ օրուընէ ի վեր մարդ չվարակեցաւ։ Նորտ Տեօյչէ Այկ. Հայթհան կը ծանուցանէ թէ Ը. և Ժ.Զ. զօրաբանակաց մեծ ռազմախրճիները տեղի պիտի չունենան

Պանք տը Բօնս	»	»	4 30
Ցօս. Շանմ է վալէօր	»	»	4 18
Ըէժի	»	»	17 08
Թրամուէյ	»	»	592 ½
Բումէլիի երկանուղի		ֆր.	87 ¾
Բաժնեմուղի Լաւրիօնի Դ. կ.			86

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

ՓԱՐԻԶ, 6 Սեպտեմբեր

Ֆրանսական Ռանթ 3 %	100 37½
» » 4½ %	105 62½
Օսմանեան բանսօլիտէ Սէրի Դ.	21 67½
Օսմ. մսրա. արժեթուղթ	469 68
Բրիօրիթէ Թիւրք (1890)	438 75
Օսմանեան երկանուղի	88 12½
» Ըէժիի բաժնեմուղիք	386 25
Պանք Օթօման	579 37½
Քրէտի Լիոնէ	808 75
Իտալական Ռանթ 5 %	92 60
Եգիպտական միացեալ	497 50
Զէք Լոնտրայի վրայ	25 18
Օսմանիէ Օսմանեան բանսօլիտէ	390 62½
ԼՈՆՏՈՆ,	6
Անգլ. բանսօլիտէ	97 06
Օսմ. » Սէրի Դ.	21 50
» » » Ա.	52 ½
» » » Բ.	28 ¾
» » » Գ.	21 ¾
Օսմ. փոխառութիւն 1871	98
Փոխառութիւն 1877 (Տէֆանս Լոն)	94
Պանք Օթօման	13
Ասրնի երկանուղի	20 ½
Դասպայի երկանուղի	13
Եգիպտական միացեալ իւնիֆիէ)	98 ¾
» առանմ. բրիվիլէժիէ 1890	104
Տօմանիալ (փոխառ. Ռոշիլտ)	104
Փոխանակութիւն Փարիզի վրայ	25 300
ՎԻԵՆՆԱ,	6
Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	120 05
» Փարիզի »	47 55
Օսմանեան Ըէժիի բաժնեմուղիք	183 75
» երկանուղի	44 60
ՊԵՐԼԻՆ,	6
Օսմանեան երկանուղի	91 90
Օսմ. Ըէժի	200
Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	20 330
» Փարիզի »	80 85

ԵԳԻՊՏՈՍԷՆ ԼՈՒՐԵՐ

ԱՂԷՔՍԱՆԴՐԻԱ, 19/31 Օգոստոս

Եգիպտոսի Հայոց առաջնորդ Գեր. Տ. Գէորգ Ծ. վարդապետ Իւթիճեան իւր պաշտօնատեղին վերադառնալէն ի վեր մեծ ջանքով կ'աշխատի ի կարգադրութիւն առկախ խնդրոց, նաև տեղական կառավարութեան հետ բարւոք յարաբերութիւններ ունենալով։

Նորին Գերապատուութիւն Եգիպտոսի Խաիվ Բարձր. Ապպաս Հիլմի փաշայի ներկայանալով՝ համակրալիր ընդունելութիւն մը գտնելէ յետոյ այցելութիւն տուաւ կայսերական պատուիրակ Վսեմ. Ահմէտ-Մուխթար փաշայի, Բաղդադեպետ Մուհամմէտ Մահէը փաշայի և այլոց։ Վսեմ. քաղաքապետը փոխադարձ այցելութիւնով մը պատուեց մեր Գեր. առաջնորդ Ս. Հայրը որ արժանավայել ընդունելութիւն մ'ըրաւ նմա։

Գեր. Առաջնորդ Ս. Հայրն այս առաւօտ կայսերական պատուիրակ Ղազի Ահմէտ Մուխթար փաշայի ապարանքն երթալով՝ շնորհաւորեց Վսեմ. Սուլթանի գահակալութեան տարեդարձն և այս առիթիւ բարեմաղթութիւններ ըրաւ վասն թանկագին կեանց Ն. Վսեմաւորութեան։ Մուխթար փաշա իւր գոհունակութիւնն եւ շնորհակալութիւնն յայտնեց։

* *

Անցեալ շաբաթ օր Վսեմ. Տիգրան փաշա Ապրօ և Վսեմ. Պողոս փաշա Նուպարեան այցելութիւն տուին Գեր. Առաջնորդ Ս. Հօր. այս տեսակցութեան մէջ որոշուած էր որ թէ Աղէքսանդրիայի և թէ Դահիրէի մէջ ժողովոց ընտրութիւնները կատարուին։

Ասոր վրայ պէտք եղած պատրաստութիւնները տեսնուելով, ամսոյս 9|21ի կիրակի առաւօտուն Աղէքսանդրիայ ազգայնք ի ժողով գումարուեցան Ազգ. վարժարանին մէջ։ Ատենը բացուեցաւ ժամ 10ին (Ը. Ե.)։

Գեր. Առաջնորդ Ս. Հայրն համառօտ տեսութիւն մը ըրաւ նախորդ թագաւոր Խորհրդոյ պաշտօնավարութեան վրայ և յայտնելով երկու Վսեմ. փաշայներու հետ տեղի ունեցած որոշումն հրաւիրեց թագաւոր Խորհրդոյ նոր ընտրութիւն կատարել, յորդորելով ժողովականները որ ամենքն ալ խղճի մտօք ի գործ դնեն իրենց այս ընտրական իրաւունքը։ Գեր. Նախագահ Ս. Հօր առաջարկութեամբ՝ Վսեմ. Պողոս փաշա Նուպարեան միաձայնութեամբ և ձեռամբարձ քուէով վերակոչուեցաւ ի պաշտօն Ատենապետութեան։ Աղէքսանդրիացիք՝ իրենց նշան մը իրենց յարգանաց և համակրանաց՝ այս արտայայտութեամբ պատուեցին Պողոս փաշան։

Այնուհետեւ պատրաստեալ եռապատիկ ցանկի մը վրայ օրինաւոր կերպով գաղտնի քուէարկութիւն կատարուեցաւ։ Հրաւիրեալներն էին թուով 113, որոց 60ն անձամբ և 4ը նամակաւ մասնակցած էին։ Քուէհամարը կատարուելով յայտարարուեցան թագաւորական խորհրդոյ անդամ ընտրուողները։ Ատենը բացուեցաւ ժամ 12ին և ժողովականք շնորհակալութիւն յայտնելով Գեր. Առաջնորդ Ս. Հօր՝ գոհունակութեամբ մեկնեցան։

Նորընտիր անդամներէն երկուքին հրաժարմամբ՝ առաւելագոյն քուէ ստացողներէն երկուքը անոնց տեղն անցած են, որով Աղեքսանդրիոյ թագաւորական խորհուրդն վերջնապէս կազմուած է հետեւեալ պատուարժան անձերէ։ Վսեմ. Պողոս փաշա Նուպարեան ատենապետ
Անտոն էֆ. Արթինօֆ
Գաբրիէլ էֆ. Սեզրոսեան
Կարապետ պէյ Ըէյիզեան
Հայկ էֆ. Էքիզէր
Յակոբ էֆ. Աղնաւորեան
Յովհաննէս էֆ. Զիգեանօֆ
Պողոս պէյ Աշքեան
որոնք Գեր. Ս. Հօր ներքեւ ընդունած են իրենց պաշտօնն և յուսով ենք թէ օգտակար պիտի հանդիսանան եկեղեցւոյ և ազգին։

Այսպէս խաղաղութեամբ վերջացաւ երկար ժամանակներէ ի վեր այլ եւ այլ խօսակցութեանց առիթ տուող այս խնդիրն եւ կը յուսամք որ այսպիսի օրինաւորութեամբ կը վերջանան նաև ի Գահիրէ կատարուելիք ընտրութիւններն. տեղւոյս ազգայինք պէտք է ամեն բանէ աւելի վստահութիւն ունենան Գեր. Առաջնորդ Ս. Հօր խոհեմութեան, ուղղութեան և գործունէութեան վրայ։

* * *

ԿԱՒԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստոս 1էն մինչեւ 11 թուականաւ Թիֆլիզէն առնուած լրագրերէն կը քաղենք հետեւեալ լուրերը։

Շամախում յուլիսի 26ին վախճանուել է աղնուատոհմ Սմբատ-բէգ Լալայեանցը։ Նա զոհ է գնացել խոլերային։ Հանգուցեալն ուսում էր առած Լազարեան ճեմարանում։ Թատրոնական և այլ հասարակական գործերում նախանձախնդիր լինելով, նա գ-ծել է որքան ներել են իւր ոյժերը։ Նա թողել է մի քանի հրատարակութիւններ։

Լսում ենք, որ հանգուցեալի եղբայր Պողոս բէգ Լալայեանն իւր վաղամեռ եղբօր յիշատակի համար՝ նրա սիրած գործի՝ հայոց թատրոնի փոնդին նուիրում է 5,000 ռուբլի։

—Աստրախանի լրագիրները հաղորդում են, որ այդ քաղաքում խօլերայի ժամանակ հայերը ամենից սակաւ են մեռնում։ Պատճառն այն է, որ Աստրախանի հայերը կազմում են քաղաքի աւելի ինտելիգէնտ տարր և ի հարկէ խօլերայի ժամանակ հասկացան թէ չպէտք է ուտել հում բանջարեղէններ, մրգեր և այլն։ Այն ինչ ասէտ, ռամիկ ժողովուրդը չէ հաւատում գիտութեանը և շարունակում է անզգոյշ կերպով ուտել վնասակար կերակուրներ և խմել չեփուած ջուր։ Պարզ է, նոյնպէս, որ Աստրախանի հայերը աւելի հասկացող եւ ինտելիգէնտ ժողովուրդ լինելով, քան զիցուք Երեւանի տգէտ հայ ամբոխը, այդ վերջին քաղաքում մեռնողների տոկոսը շատ շատ է լինում։

—Նուշուց գրում են. «Օգոստոսի 2ին Նուշուց 4—5 վերստ հեռաւորութեան վրայ մի սոսկալի եղեռնագործութիւն է կատարվել։ մարթել են չուշեցի մի հայ-բողոքական երիտասարդին։ Թշուառի ձեռքն էլ են կտրել։ Մարմինը կողոպտած չէ։ Սպանողը, կամ սպանողները անյայտ են։»

—Մեզ հաղորդում են Վաղարշապատից հետեւեալ տեղեկութիւնները։ «Այստեղ շրջը անտանելի է, մանաւանդ ժամը 11ից մինչեւ 5ը։ Կայ և չրի մեծ պակասութիւն, որովհետեւ նոր չինվող ջրանցքով ջուրը դեռ չէ բերված։ Այդ ջրանցքը, որից ժողովուրդը պէտք է սպասնայ պարզ եւ մաքուր ջուր, վաղարշապատցիք պարտական են էջմիածնին և յատկապէս սրբազան տեղակալին։ Այդ ջուրը բերելու համար էջմիածինը իր գանձարանից տուեց 4000 ռուբլի։»

—Ս. էջմիածնից մեզ գրում են. «Արդէն սկսել են խօլերայի դէմ նախազգուշական միջոցներ ձեռք առնել և Գէորգեան ճեմարանում։ Եթէ ճեմարանի բժիշկ Պ. Մելքսէթ Զարդարեան փորը ինչ անխատակ եւ անհոգ մարդ է, ուրիշ կողմից Գէորգեր Պ. Պետրոս Սուքիասեան փերին պատճառի եռանդոտ երիտասարդ է։ Նա ամեն ճիգ թափում է ճեմարանի և առհասարակ էջմիածնի մաքրութեան համար ձեռք առնելի հնարաւոր միջոցների վրայ։ Պէտք է խոստովանել որ ճեմարանի վարչութիւնը ամեն կերպ աշխատում է ճեմարանը կատարեալ առողջական պայմանների մէջ դընելու։ Պ. Սուքիասեանին կամեցան գիւղում (Վաղարշապատում) վարձել։ բայց չը համաձայնվեց թողնել էջմիածինը, մի եւ նոյն ժամանակ խոստանալով ոչ թէ վարձով, այլ իր կարողութեան չափ ձրիապէս օգնել իր խորհուրդներով Վաղարշապատցիներին։»

—Մեզ հաղորդում են հատատ աղբիւրներից, որ գերասան Պ. Պետրոսեանը թողնում է բոլորովին հայ բեմը և ուղեւորւում Ռուսաստան։

Թէ ովքեր են մեռում խմբի մէջ անցեալ տարւայ գերասաններից՝ առ այժմ յայտնի չէ։ Երկու առաջնակարգ ոյժեր՝ Տ. Սիրանոյշ և Պ. Պետրոսեան չեն լինիլ, այդ միայն ճիշտ է։

—Մեզ հաղորդում են, որ քաղաքիս Օ. Ստեփաննոսի կուսանաց միաբանութիւնը 200 ռ. է ընծայել Թիֆլիզի ձրի թէյանոցին։ Զարմանալի են մեր Արժ. կուսանք, էլ ո՞ր օրւայ համար են, որ այսօր իրանց անմիջական աջակցութեամբ չեն օգնում հիւանդներին, թշուառներին, այլ մի 200 ռուբլիով իրանց պարտքը կատարած են համարում։ Թիֆլիզի Կուսանաց միաբանութիւնը այս ազէտին մեծ գործ ունի անելու և այժմ էլ ուշ չէ, եթէ կամենայ։

Առաջարկում ենք սրբակրօն կոյսերին, որոնց Թիւը, եթէ չենք սխալւում, 25-30ի է հասնում, իրանց մէջ բաժանեն Թիֆլիզի թաղերը, պրծանեն, մի կողմից հանգանակութիւն ժողովելով, միւս կողմից բաժանելով հայ, շաքար, հագուստեղէն, դրամ աղքատ կանանց և աղջկերանց։ Հայ կինը, աղջիկը, շատ փոքր բացառութեամբ, չէ յանձնում թէյատները, ուրեմն պէտք է և նրանց մասին էլ հոգալ, և ո՞վ կարող ու պարտական է այս ազէտի ժամանակ հոգալ և խնամել հիւանդին, աղքատին, թշուառին, եթէ ոչ մեր համեստապայլ կուսանք։ Բարեբախտաբար մեր կոյսերի մեծագոյն մասը պատկանելով հայ ազնուական առաջնակարգ ընտանիքներին, բարի անուն ունին քաղաքումս։ մի՞թէ իւրաքանչիւր մեր այդ կոյսերից, եթէ կամենայ, առնւազն մի 200 ռ. չէ՞ կարող հանգանակել, իսկ 25-30 հոգին հեշտութեամբ կարող են իրանց շրջաններում ժողովել մի 5—6 օրւայ մէջ 4—5 հազար ռուբլի և մի քանի հարիւր ընտանիք մի քանի ամիս պահել պահպանել։

Նոյն խորհուրդը կը տանք և մեր կանանց յարգելի ընկերութեան, որ փոխանակ մոգորեալ ճաշարան քանալու, մեր գիւղերն ուղարկէին հերմակեղէն, դեղ-բայք, չայ, շաքար։

ԲԺՇԿԱԿԱՆ

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ

«Վրէն բժիշկի» յօդուածը առիթ կուտայ ինձ երկու տող գրել թելադրութեան վրայ։

Մեր մէջ բժշկական նիւթերու վրայ շատ քիչ կը գրուի, և կրնամ ըսել թէ հազուագիւտ է որ հոգե-բժշկական (psychiatrie) նիւթերու վրայ գրուի։ շատ գիտուններ տակաւին մեծ ծանօթութիւն չունին մտային հիւանդութեանց ու քնածութեան (hypnotisme)ի վրայ։

«Վրէն բժիշկ»ը թէպէտ թելադրութեան խօսքեր կ'ընէ իւր յօդուածին մէջ, բայց կը խոստովանի թէ կոկորդալիր խնդացեր է թելադրեալներուն վրայ։ արդեօք պիտի կրնա՞ խոստովանիլ թէ ինք իւր կեանքին մէջ իւր բոլոր բժշկութեամբ հիւանդութեան մը գաղտափարէն չէ թելադրուած։

Ի՞նչ է ուրեմն թելադրութիւնը (suggestion) որ ոչ միայն քիչ շատ կարդալ գիտցողներն, այլ բոլոր մարդկութիւնը իրեն ենթակայ կ'ընէ։ Թելադրութիւնը գործողութիւնն է որով գաղափար մը կը մտնէ ուղեղին մէջ ու կ'ընդունուի մտքէն։

Ամեն գաղափար զգայարանով մը կը հասնի ուղեղին։ Հինգ զգայարաններ ունինք, ուրեմն հինգ դուռ ուղեղէն ներս մտցնելու համար արտաքին տպաւորութիւններ որք գաղափար կ'ըլլան ու թելադրութիւններ կը կազմեն։

Թելադրութեան համար գաղափար մը պէտք է ուղեղէն ԸՆԴՈՒՆՈՒԻ ու ենթակայն պէտք է ՀԱՒԱՏԱՑ։

Առնենք տեսողական զգայարանը որ ըսողականին հետ հոգեկան կեդրոնին ամենէն կարեւոր դռներն են։ Աչքը առարկայ մը կը տեսնէ, առարկան կ'ընդունուի տեսողական ջիղին, ջիղը կը տպաւորուի ու այդ տպաւորութիւնը կը հասնի ուղեղին ուր գաղափար կ'ըլլայ ու գաղափարն թելադրութիւն, առարկային թելադրութիւնը։ Մէկուն յօրանջելը տեսնելն յօրանջելու գաղափարը կուտայ, մէկուն ճաչելը տեսնելը ուտելու գաղափարը։

Լսողական գործարանը ամեն վայրկեան թելադրութեան նոր աղբիւրներ կը բանայ մեր մտքին։ Ամեն ինչ որ ականջէն իմացողութեամբ ներս կը մտնէ, ամեն ինչ որ առանց ո եւ է նախնական ստուգութեան կամ նոյն իսկ ստուգութեամբն ականջէն ուղեղը կը մտնէ ու միտքը կ'ընդունի՝ թելադրութիւն մ'է։ Երբ կ'ըսեմ մէկու մը «մեղու մը կայ ճակտիդ վրայ» այս բառերն արտաքին ականջէն կ'ընդունուին ու լսողական ջիղն որ կը տպաւորուի մինչեւ լսողական կեդրոնը կը տանի այս տպաւորութիւնն։ եթէ ենթակայն չհասկնար լեզուն զոր կը խօսիմ, ուղեղն ազմուկ մը կ'ընդունայ, ջղին տպաւորութիւնը, բայց չունենար ո և է գաղափար, ուրեմն չկայ թելադրութիւն քանի որ չկայ գաղափար։ երբ կը հասկնայ ու երբ բառերու այս մասնաւոր այտնակը — լսողական ջղին տպաւորութիւնը—կրնայ իւր մտքին առաջուց ընդունած առարկայներուն հաղորդել, տպաւորութիւնը մեկնուած է, դի լսողական ուշը կ'արթնանայ ու այս տպաւորութիւն առարկայի գաղափարին կը վերածուի, բառերն որք հասան ուղեղին հիմա գաղափարը կը յղանան, ենթակայն կը լսէ և ԳԻՏԷ թէ ինչ կը լսէ։

Հոտոտելեաց զգայարանը նոր դուռ մ'է գաղափարներ հաղորդելու մեր մտքին։ երբ ծաղկի մը հոտը կ'առնենք, մեր մտքին առաջ կուգայ ծաղիկին մտաւորական պատկերը։

Նոյնպէս են ճաշակելեաց զգայարանք, գէշ համ մը կը գոյշ ախորժակը ու կը փսխեցնէ իսկ։ անուշ համ մը ախորժակ կը բանայ։

Շօշափելեաց զգայարանը գերազանցապէս թելադրելի են, ձեռաց սեղմումը բարեկամութեան գաղափարը կ'արթնցնէ, համբոյր մը . . . շատ բաներու գաղափարը։ Խուլ-համր կոյսերն չօշափելեաց զգայարանաց միջոցաւ միայն կրնան արտաքին տպաւորութիւնները իրենց ուղեղէն ներս մտցնել, յայտնի է թէ այս զգայարանք միայն արտաքին աշխարհին ու այս տարբաթանաներուն ուղեղին միջնորդն են։

Մինչեւ հոս արտաքին տպաւորութիւններն էին որք թելադրութիւն մը կուտային, բայց այդ թելադրութիւնք կը կուսակցին մտքին մէջ ու յանկարծ առանց արտաքին ո և է էական զգեցուածեան, միտքն իւր թելադրութիւններէն նոր թելադրութիւն մը կը հանէ, (autosuggestion)։ Կին մը տեղ մը սրտի հիւանդութեանց մէջ սրտի բաբախում կայ կը կարդայ, կը թելադրուի, յետոյ երբ իւր սիրտն ալ կը բաբախ ո և է ջնջին պատճառաւ մը, մտքին մէջ կը կատարուի autosuggestion մը, իւր սրտին բաբախումը սրտի հիւանդութեան թելադրութիւնը կը զարթուցանէ։ Բժշկական երիտասարդ ուսանողք ինքզինքնին թոքախտաւոր կը կարծեն, որովհետեւ կը տեսնեն հիւանդը, անոր նիհարնալը, հազալը, թքնելը ու իրենց միտքը լի ը լրովին այդ թելադրութիւններով՝ երբ քիչ մը կը հազան կամ կուրծքի փոքր ցաւ մը կունենան, նոր թելադրութիւն մը կը լինի իրենց համար որ autosuggestionով առաջնոյն գաղափարը կը յիշեցնէ,—թոքախտաւորին գաղափարը—։ Ամեն բժիշկ ընտանիքին մէկ անդամին գլխու փոքր ցաւը կամ մէկ ուրիշ աննշան անհանգստութիւնը մեծ տպարութեան մը տեղ կը դնէ։

Երբ գաղափար մը զգացման մը կապուած է, ու երբ այդ զգացումը յանկարծ մտքին մէջ կը զարթնու, այդ առաջին գաղափարն ալ կը վերածնի։ մէկը մարդասպանութեան մը ականատես կ'ըլլայ ամայի, ու սրտի բաբախումներ կունենայ, յետոյ ամեն անգամ որ ո և է պատճառաւ սրտի բաբախում ունենայ՝ մարդասպանութիւնը կը յիշէ։ Երբ թաչկինակին ծայրը կապ մը կ'ընեն բան մը յիշելու համար, այդ կապին տեսքը կամ մտաներու տակ այդ կապը զգալու թելադրութիւնը առաջին գաղափարը կը յիշեցնէ։

Նպատակս միայն «Վրէն բժշկին» գրած գէպքերուն վրայ փոքր տեսութիւն մը ընել էր, որով աւելի կնճռոտ բացատրութիւններու մէջ չեմ մտներ, բայց ուրիշ անգամ կարելի է առիթ ունենամ թելադրութեան վրայ բժշկական տեսակէտով գրել, թէ ինչպէս այսօր շատ մը հիւանդութիւններ թելադրութեամբ կը բժշկուին։

Պ. Գ.

ԲԺՇԿԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ

Պատի անտի

ՀԻՆԳ ԱՄԻՍ ԴԻՍԿԻ ՄԸ ԲՈՎ

Թղթակից մը, օգոստոս 10,22 թուականաւ Փեթերսպուրկէն հետեւեալը կը գրէ առ Բրթի Մուռնալ։

«Այս պահուս յոյժ արտասովոր եղելութիւն մը կը զարգացնէ բովանդակ Փեթերսպուրկը։

«Ի Փեթերսպուրկսքաեա — Սթերլինա, պզտիկ փայտաշէն տան մը մէջ կը բնակէին երկու քոյրեր, Սոֆի և Սթեֆանիտ Թըրէթեաքօֆ, հեռաւոր ազգականուհիք Թըրէթեաքօֆ մեծատուն միլիոնատէրին, որ վերջերս մեռաւ ի Մոսկուա, ուր ժամանակ մը քաղաքապետի պաշտօնը վարեց կայսրութեան այս երկրորդ մայրաքաղաքին։ Այս երկու կանայք, մին 74 տարեկան, միւսը 64, գնած էին յիշեալ տունն ամայի փողոցի մը մէջ տասը տարի առաջ, և հոն կ'ապրէին բոլորովին առանձնացեալ, առանց ծառայի, ամենուին թող չտալով մէկուն որ իրենց դրան սեմէն ներս մտնէ և իրենք իրենց նայելով տուներնին։

«Ամառը շաբաթը մէկ անգամ և ձմեռը շաբաթն երկու անգամ, երկու քոյրերէն էն պզտիկը դուրս կ'ելնէր, պէտք եղածը գնելու մասնաւորներէն և հայագործէն, յետոյ, մնայեալ ժամանակը բնաւ չէր ելներ։ Եթէ մէկն ուզէր այցելութիւն տալ իրենց, ժամերով կը զարնէր ու կը զարներ։ բնաւ չէր բացուեր դ ւռը։

«Բայց հնտախտը կը ծագէ ի Փեթերսպուրկ, և առողջապահական յանձնախումբը ամեն տուն կ'այցելէ։ Այս օրերս Թըրէթեաքոփ օրիորդաց տունին կուգայ կարգը։ զանգակն հնչեցուելէ և դրան զարնելէ ետք ի զուր, ոստիկանութեան պաշտօնեան, որ կ'ընկերացեր յանձնախումբին անդամներուն, կարոչէ կողպարարի մը բանալ տալ դուռը։

«Հակառակ պառաւին ընդդիմութեան, ոստիկանը բանել կուտայ զայն երկու գրծակալներու և այցելութիւնը կը սկսի։

«Բնակարանը ահաւելի գարշահոտութիւն մը կարտաքսուէր։ Բուրջերով ծածկուած անկողնի մը վրայ տարածուած էր անդրանիկ քրոջ փտած նեխած դիակը, զոր արդէն կրծած էին ահագին քանակութեամբ խոշոր մուկեր որք կը փախչին ի տես այցելուներու։

«Սթեֆանիտ Թրէթեաքոփ, որ մասամբ խելագարած կ'երեւէր, վերջապէս կը յայտարարէ թէ իր անդրանիկ քրոջը ապրիլ ամիսէն ի վեր մեռած էր, թէ զայն իր քով պահած էր անոր համար որ ինքն ալ քիչ ատենէն պիտի մեռնէր, և թէ կուզէր անոր հետ թաղուիլ։

«Առաջին ամիսներուն, դիակին քովը կը պառկէր։ բայց որովհետեւ մուկերն իր վրայ ալ կը յարձակէին, յարակից սենեակը գացած բնակած էր։

«Ամենամեծ դժուարութեամբ կը յաջողին զատել զայն դիակէն զոր խելայեղօրէն կը հմարուրէր, թէեւ փտումն այնքան յառաջացած ըլլար որ գլուխն ու անդամներն արդէն կը բաժնուէին կոճղէն։

—Չեմ ուզեր որ թաղեն զայն, կը գոչէր, չէ նէ երկուքս ի միասին թաղեցէք։

«Սթեֆանիտ Թրէթեաքոֆ յիմարանոց մը կը ղրկուի։

«Հէք խելագարին տունը ոստիկանութեան կողմէ կը կնքուի։»

ՆՈՐ ԵՐԵՒՈՅԹ ՄԸ

Հնդկաստանի մէկ պզտիկ քաղաքին մէջ Օրիսա Ծնած են երկուրեակ քոյրեր, Ռատիքա-Տօտիքա, իրարու փակած, որպէս էին ժամանակս։ Սիամցի եղբարք։ Ասոնք աշխարհս շուրջն իրենց վաչկատուն պատյաներուն պատիւ, մրցում պիտի ընեն Մելլի-Քրիսթինիանի, այս միւս էգ ամրոցն որ անցեալ տարի ծափահարուեցաւ Շաթըլէի մէջ խաղին մէջ ի Փարիզ։ Երեքուկէս տարու են և իրարու կցուած են կուրծքերնուն։ Կարգ մը գործարաններ ունին զորս երկուքն ալ կը գործածեն։ Երբ մին ուտէ, միւսը գոհունակութիւն կը յայտնէ։ Զանոնք միացնող թաղանթը սպասկի բարակ է։ երբ քնանան, պզտիկ աղջիկներէ մին կանկի վրայ կը պառկի, միւսը կողին վրայ կը հանդչի։ Մինչեւ ցարդ Ռատիքա և Տօտիքա հրաշալի կերպով կը հասկնան զիրար, խելացի են և Անգլիերէն կը սորվին ոչ շատ դժուարութեամբ։ Իրենց արտասովոր պարագան Հնդկաստանի մէջ առարկայ եղած է շատ մը գիտական քննախօսութիւններու։ Եւրոպոյ գիտնական ակադեմիաներն ալ անուշտ պիտի զբաղին անոնցմով եթէ, ինչպէս կը հաւատան, Ռատիքա-Տօտիքա ձեռնարկին կատարելու աշխարհի չը ջնանը։

ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄ

Օդանաւորդը՝ Բօդէնի բնակչաց համար խորհրդաւոր սոսկալի արարած մըն է։ Այս օրերս Բրոցէպորոլի և Շլէվօ գիւղերուն վերեւ տեսնուելով օդապարիկ մը, գիւղացիներն, ափիբերան եղած, ի ծունր իջեր են՝ պաղատելով երկնից և գոչելով. «Ահա՛ հնտախտը»։ Ուրիշներ կը պնդէին անվրդով և տակաւին կը պնդեն թէ ամպերուն մէջ մարդ մը տեսած են գերանդաձէն։ Խեղճ օդանաւորդները չեն գտեր մէկն որ համարձակի օգնել իրենց որ օդապարիկը սայլի մը վրայ բեռցուի։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Ճամբորդ մը պանդոկի ճաշարանի մը մէջ ճաշելէ վերջ չուզելով աւելցածն հոն թողուլ, իր առջեւը գտնուող խորոված վառեակը կամաց մը գրպանը դրաւ։ Քիչ մը անդին կեցող սպասաւոր մը, որ նշմարեց զայս, առանց նշմարելու՝ ճամբորդին մօտենալով պնակը առաւ և մէջի տաք ջուրը ճարտարութեամբ անոր գրպանը պարպեց։ Վերջինը տարօրինակ տաքութիւն մը զգալով կողին վրայ, դարձաւ և ըսաւ.

—Ի՞նչ կ'ընես, կարսօն։

—Ջուրը մուռցաք, պարոն։ Երկուքը մէկտեղ համով կ'ըլլայ։

* * *

Բուռաքանը.—Ասիկայ ծախստի տունկն է, օրիորդ։

Օրիորդը.—Զարմանալի բան։ Արդեօք ե՞րբ կը բուսնին սիկարները։

* * *

Տիկին Ս. . . . — Ծանր խոստովանութիւն մը պիտի ընեմ քեզի, բայց պէտք է որ գաղտնիքը մեր մէջ մնայ։

Տիկին Բ. . . . — Կը վստահացնեմ զքեզ որ ոչ ոք կրնայ ինձմէ գաղտնիք մը խնամալ։ Դեռ երբէկ Տիկին Ս. . . . ըսաւ ինձ թէ իր ամուսինը սնանկանալու վրայ է և խնդրեց որ մէկու մը չըսեմ, և տակաւին բան նէս ելած չէ։ Տ. Ս. Մ.

ՄԵԶՊՈՒՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՑ

[28րդ Տարեշրջան]

Կրթական հաստատութեանս՝ ուր կանանդին նախնական եւ երկրորդական ուսմունք եւ զիտութիւն, սոյն նոր շրջան կսկսի ամսոյս 31 ին, օր երկուշաբթի։

Աշակերտուհիք կ'ընդունուին նոյն օրէն։

Նախակրթարանի դասերը կսկսին սեպտ. 2, չորեքշաբթի օրէն։ Իսկ ուսումնարանի դասախօսութիւնք՝ սեպտ. 7 երկուշաբթի օրէն։ Աշակերտուհիք պարտին ներկայանալ նոսին Տնօրէնուհեան. իւրանց ծնողաց կամ պաշտպանաց եւ կամ նոցա փոխանորդներու հետ փոխադարձ պարտաւորութեանց վրայ խորհրդակցելու եւ ապա ձեռնարկել դասատուութեանց։

Հիմնադիր - Տնօրէն
Մ. Ս. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

25 օգոստ. 1892 Իսկ. Իմատիէ 196 1—2

ԳԷՐՊԷՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՑ ՍԻՍՏԻՍՏԱՏԱՐ

[17 րդ Տարեշրջան]

Վարժարանիս վերաբացումը տեղի կ'ունենայ յառաջիկայ սեպտեմբեր ամսոյ սկիզբը։ Աշակերտք պարտին մտնել Սեպտ 7, 8 եւ 9, բշ. Գշ. եւ Դշ. օրերը։ Սեպտեմբեր 10, հինգշաբթի, դասախօսութիւնք պիտի սկսին։ Աշակերտաց ընդունելութեան մասին ծնողք սեպտեմբեր ամսոյ սկիզբէն կարող են ամէն օր վարժարանիս մէջ տեսակցիլ մեզ հետ։

1892 օգոստ 25 Հիմնադիր-տնօրէն
Ռ. Յ. ԳԷՐՊԷՐԵԱՆ
195 1—2

ՄԵՍՏՈՒՏՃԵԱՆ ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆ

ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՑ

Հաստատութեանս մէջ կ'աւանդուին հայերէն, տասնեակն, ֆրանսերէն, անգլիերէն լեզուք, եւ այլ «Նախնական եւ երկրորդական», ուսումունք, ձեռագործ չորեքտասան առաջնակարգ ուսուցչաց։

Կ'ընդունուին զերեկեայ աշակերտուհիներ, եւ գիշերօթիկ ու ցերեկեայ աշակերտներ որք խորին հմտութիւն մը կը ստանան թէ՛ լեզուաց եւ թէ ուսմանց մասին։

Տնօրէնն ընտանեօք կը բնակի վարժարանին մէջ եւ ուսանողք այն հասարակ ընտանեկան խնամք եւ կրթութիւն կը վայելեն։

Թ. ըդ Տարեշրջանը կը սկսի սեպտեմբեր 1ին։ Այն Պատ. ծնողք որք փափաքող են մեր խնամոյ յանձնել իւրանց զաւակներն, կը հրաւիրուին զիմել ի վարժարան, — յիշէնք — Դարու, Փափաղեան Ամիրայի ծովեզերեայ օդատուն ապարանքը։

Հիմնադիր - Տնօրէն
Գ. Պ. ՄԵՇՏՈՒՏՃԵԱՆ

191 1—3

ԲԱՅՈՒՄՆ ԵՐԵԿՈՅՑԵԱՆ ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԱՐԱՆԱՑԻՑ

Պ. Լ. ՇԼՍԹԸՐԻ ԿՈՂՄԷ

9 21 Սեպտեմբերի սկսեալ

Դասընթաց ուսուցման ֆրանսերէն լեզուի.—Վերարանութիւն տեղական կանոններու եւ հրամանագր.—Կատարելագործումն.—Աշակերտաց Ֆրանսական զրականութեան վրայ.—Առաւելապան պատմութիւն.—Առաւելական աշխարհագրութիւն։ Այս մասնաւոր թատրոնացը մասնաւանդ այն երիտասարդաց յատուկ են որք օրուան մէջ զբաղած ըլլալով՝ կրնան իրիկուան մէկուկէսին այս դասընթացին հետեւիլ, շաբաթն երկու անգամ։ Աւելի ընդարձակ տեղեկութեանց համար դիմել ֆրանսական զրաւճառանոցն ի Բասատ տրէ Թիւնէլ Թիւ 7 եւ Պ. Ֆ. Զասմանիտէսի յուսական հաստատութիւնն ի Դուլլուրլու փողոց, Թիւ 3։

187 1—3

«Ֆլավիեան» չոգենաւը, կը սպասուի Լիվերբուլէն դէպ ի ամսոյս 15։

Գ. Ն. Ֆլավիան ընկ.
ԷՏ. ԼԱՆՏՈՆԻՆ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Բուսմէլիի երկաթուղեաց վիճակահանութեան 136րդը պիտի քաշուի յառաջիկայ հոկտ. 10— ոեպտ. 20 ին։

Սոյն վիճակահանութեան մասնակցիլ փափաքողք պէտք է դիմեն սորագրեալ հասցէին։

Պիտի շահին 600 թիւեր, որոց առաջին պարգեւն է այս անգամ 300,000 և երկրորդը 25,000 ֆրանք։ Անոնցմէ զատ 48 թիւեր ևս կը շահին դարձեալ մեծ պարգեւներ. իսկ մնացեալ 550 թիւերն ալ 400ական ֆրանք։

Մէյն մէկ թիւով կրնայ շահուիլ ասունցմէ մին և մինչեւ իսկ առաջին պարգեւը։

Շահելի գումարին ամբողջը ստանալու իրաւունք ունեցող «բրոմէսին գին է 10, կէսինը 7ու կէս և մէկ քառորդինը 4 դահեկան։

Դաւառներէն հնչուն դրամի տեղ «բոստայի բուլ» ալ կ'ընդունուի։ «Փոստայէն ծախքը գն

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ Անգլ. Ոսկի 1,000,000 **"ՓԻՆԻՔՍ"** Հիմնեալ է Լոնտոն յամին 1782

ՓԻՆԻՔՍ, հիմնեալ առաւել քան մի դար յառաջ, սոսկ հրդեհի ապահովագրութեան ընկերութիւն մ'է՝ որոյ բաժնետէրերը Անգղիոյ ամենահարուստ և հանրածանօթ դրամատէրեր են՝ ունենալով անսահման պատասխանատուութիւն։

ՓԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյցն է 18,000,000 Անգլ. ոսկւոյ գումարն զոր ցարդ վճարած է հրդեհի ձնասուց համար։

34

ՓԻՆԻՔՍ ընկերութիւնն կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի և կայծական՝ կառուածք, կարասիք և ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանօք և միջնորդութեամբ ստորագրելոցս, որք ունիմք լիազօր իշխանութիւն կարգադրելու անմիջապէս մեր ապահովագրելոց կրած ձնասներն։

Հ. ՍՈՒԱՆ և ԸՆԿ. ընդհ. գործակալք Կ. Պոլսոյ, Պուլկարիոյ և Սեւ ծովու եզերաց Թիւ 11։ և 12, Սանտալճը խան, Ղալաթիա, Աւստրիական Թղթատան վերեւ։

HAMBURG MUNICH UNITED

ՀԱՄՊՈՒՐԳ ԵՒ ՄԻՒՆԻԽ

ՄԻԱՑԵԱԼ

Ա. ԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ	ֆռանկ 8,000,000
Պահեստի դրամ ցվերջ յունիս 1890	» 6,165,860
Տարեկան հասոյթ » » »	» 14,135,925

Ընկերութիւնս ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ կ'ապահովագրեն մթերանոցներ և բնակութիւններ և սոցա մէջ գտնուած վաճառքներ և կարասիներ խիստ չափաւոր պակագնօք։

Լիազօր ներկայացուցիչ Կ. Պոլսոյ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Պահչէ—Գաբու, Անանիատիս խան. 12, 13, 14

ՖՈՒԱՆՔՖՕՐԹՈՒԱՔ

ԾՈՎԱՑԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխ ֆռանկ 6,250,000 Պահեստի դրամ ֆռանկ 1,270,300

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց վրայ բեռցուած վաճառքներ, ինչպէս նաև թղթատարական և փոխադրական ընկերութեանց յանձնուած թանկագին նիւթեր և գրամ պարունակող ծրարներ խիստ նպաստաւոր պայմանօք և սակագնօք։ Սոյն նիւթերու վրայ մեծաքանակ գումարներ կարենալ ապահովագրելու համար Ընկ. Ֆիւնս միացած է եւրոպական 13 լուրջ ապահովագրական հաստատութեանց հետ որոց դրամ գլուխն ու պահեստի դրամն է Աւելի քան 100,000,000 ֆռանկ

Լիազօր ներկայացուցիչ համար Թուրքիոյ

ԻԼԱՆ ՊԱՊ ՍԼԻԱՆԻԷՐԻ

Հավզաթ Զըմբչկէզք Օվանքգ մէվգբլերինտէ պուլունան ասաքիրի Շահանէ իչիւն մահալինճէ մէվգբի միւնագասատա պուլունան էրզագատան նանը ազիգին 31, գօնուն էթինին 86, սըզըր էթինին 48, սատէնին 265, էրգին 73, Թուզը 30, սօզանըն 13, մմմըն 105, սապօնըն 190, կազը 100, հաթապը 4, չայիրին 27, սամանըն 5, չէքէրին 195, իւզիւմիւն 68, Փասուլեանը 28։ Մազկէր վէ մէվգբինտէ պուլունան ասաքիրի Շահանէ իչիւն նանը ազիգին 29, գօնուն էթինին 75, սըզըր էթինին 50, էրգին 73, սատէնին 260, Թուզը 28, սօզանըն 11, մմմըն 149, սապօնըն 189, կազը 59, հաթապը 4 չայիրին 24, սամանըն 6, չէքէրին 190, իւզիւմիւն 63, Փասուլեանը 29, Բալա մէվգբինտէքի ճիւնուսը ճէնապը միւլիւքեանէ իչիւն նանը ազիգին 30, գօնուն էթինին 75, սըզըր էթինին 43, էրգին 77, սատէնին 260, Թուզը 28, սօզանը 13, մմմըն 150, կազը 100, սապօնը 185, հաթապը 3, չայիրի 27, սամանը 6, չէքէրին 195 իւզիւմիւն 68, Փասուլեանը 30։ Քըզըլ քիլիսէ մէվգբինտէքի ասաքիրի Շահանէ իչիւն նանը ազիգին 30, գօնուն էթինին 76, սըզըր էթինին 45, էրգին 75 սատէնին 260, Թուզուն 27, սօզանը 14, մմմըն 140, կազը 100, սապօնը 190, հաթապը 3, չայիրին 25, սամանը 5, չէքէրին 195 իւզիւմիւն 65, Փասուլեանը 30 փարա ֆիյաթար իւլ մահալի Թալիպլէրի էօհսէնլէրինտէ օլտուզունտան պուրաձա թէնգիւը ֆիեաթ իւլ էթասընա Թալիպ օլանլարը մագամը Սէրասքէրի լէվազիմաթը ումումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի։ Նօ. 24 3—3

Մամուրլթ իւլ Ազիզէ պուլունան ասաքիրի Շահանէ իչիւն մահալինճէ մէվգբի միւնագասատա պուլունան էրզագատան նանը ազիգին 27,50, գօնուն էթինին 50, էրգին 71, սատէնին 253, Թուզը 29, սօզանը 10, ֆիլիպ մմմըն 173, մազը 89, սապօնը 165, հաթապը 7, չայիրին 24, սամանը 5, չէքէրին 175, իւզիւմիւն 62, Փասուլեանը 22։ Արպակիր մէվգբինտէ պուլունան ասաքիրի Շահանէ իչիւն նանը ազիգին 24, գօնուն էթինին 80, սըզըր էթինին 60, էրգին 70, սատէնին 280, Թուզը սօզանը 15, մմմը 180, կազը 92, սապօնը 195, չայիրին 25, սամանը 7, չէքէրին 185, իւզիւմիւն 70, Փասուլեանը 36։ Բալու մէվգբինտէքի ճիւնուսը ճէնապը միւլիւքեանէ իչիւն նանը ազիգին 26, գօնուն էթինին 71, պաքըրը 44, էրգին 68, սատէնին 260, Թուզը 25, սօզանը 15, եաղ մմմունը 169, սապօնը 200, հաթապը 6, չայիրին 25, սամանը 5, չէքէրին 209, իւզիւմիւն 79, Փասուլեանը 30 բարաա մահալի Թալիպլէրի էօհսէնլէրինտէ օլտուզունտան պուրաձա թէնգիւը ֆիյաթ իւլ էթասընա Թալիպ օլանլարը մագամը Սէրասքէրի լէվազիմաթը ումումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի։ Նօ. 25 3—3

Տայիրէի ասքէրիեէ աքարաթընտան Լանկիի քէպրիտ վագը գարաղոլմանէ արասանընն իւպէսի ֆէխս խուսիմէ օլտուզունտան, եէնիտէն խաթիմարէ Թալիպ օլանլարը Թարիխը իւնտէն էթիպարէն աղօսթօս նիհսանէթինէ գատար Մուհասէպաթ տայիրէսի շուսէնի մասասուընա միւրաձաաթ էթմէլէրի։ Նօ. 26 3—3

Նիզամիէէ սարամխանէ անպարընա 1 սէնէ գարիքնաա լիւզումը օլտուդգա ալընմագ իւզրէ միւսպայա օլունճագ Ինկիլիզ քէթէն իրիկի իւլէ եվրօբա եուն իրիկինտէն մամուլ մահ չուսպուլու քէմէր չէրիտինին պէկէր արշընը ճէտիտի 3 ղրուշա վէ մար թիրէտէն մամուլ գօլանլըք էնլի չէրիտին պէկէր արշընը ճէտիտի 2 ղրուշ 2 դարաա թալիպլի էօհտէսինտէ օլուպ, աղօսթօսըն 26ն՝ը կիւնինէ գատար պէկէր կիւն միւնագասասը իմրա օլունարագ մէվգբիւր կիւնտէ գարարը գաթիսի վիրիլէճէկինտէն իթասընա վէ իրթէսի կիւնիւս տախի 100տէ 5 թէնգիլինէ թալիպ օլանլարըն մագամը Սէրասքէրի լէվազիմաթը ումումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի։ Նօ. 27 3—3

ԼԱՆՔԱՇԱՅՐ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ի ՄԱՆՉԷՍՏԸԸ

Հիմնեալ 1852ին

Դրամագլուխ	Անգլ. Ոս. 3,000,000
31 Դեկ. 31ին աւանդ տրուած գ.	1,771,006
1891 Դեկ. 31ին պահեստ	1,635,903
Հասոյթ 1891ին	1,851,329

Այս ընկերութիւնը ընդդէմ հրդեհի կապահովէ ամէն տեսակ շէնք, կահ, ապրանք, ի Պոլիս և շրջակայքն մինչեւ Լեռնաւերնահանդանինմէջ։

THE LANCASHIRE INSURANCE COMPANY

Վնասի առնն արագ և խղճմտամիտ վճարում։

Տեղեկութեանց համար դիմել առ գործակալութիւնն ընկերութեան, 1 և 2 Իպղէթ փաշա խան, Ղալաթիա

ՐԻՉԱՐԴ Մ. ՊՈՆՏ

Նէրկայացուցիչ

ՊՈՆՏ, ՍԷԼԼԷՐ ԵՒ ԸՆԿ.

ԱՒՍԶԻՆ ԿԱՐԳԻՇՊԵՆԱՒՔ

Մրբէ-եկ. Ափէլիոյ, Կ. Պոլսոյ և Օտէսայի գիծ

ԹՈՒՄԱՍՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՔԼԸՆԿ

Առնուած	Թիմոյ	Առնուած	Թիմոյ	Առնուած	Թիմոյ
Աղպանս	2000	Ֆլամինկօ	1600	Բալէրմօ	3200
Ամէլիա	3000	Կալիլէօ	5500	Բանտէր	1700
Աբօլյո	5500	Կիրանս	2200	Բլանիւ	1500
Արկօ	2300	Կոզը	1800	Բոլը	1000
Արիոգդ	3000	Կրօսնս	2200	Բուիդգ	2800
Գասանս	3000	Հիրա	2000	Բիալիթ	4400
Գօրտինիս	2200	Հիսալկ	3800	Բինալդգ	3200
Գրավօ	2000	Հինաու	7000	Բոլլօ	3000
Գիպիթալ	8800	Հումգեր	1200	Բոմէռ	3500
Դէլյրը	2600	Ալակ	5000	Բոզարիս	3500
Դալիբաս	2500	Ձիանս	2300	Պալէրմս	4000
Դամէս	2100	Գէլլաս	2000	Պանդիակ	8200
Դաբգ	2000	Գալանիս	4200	Պարգիս	2000
Գասն	2700	Գուլիս	2200	Պիլիս	2000
Զէբգակ	5000	Լէտ	2000	Պօրէնաս	4300
Դլիս	2500	Լէբանթ	4500	Թ. Ռուիզը	3000
Գալյրաս	3400	Լիմբրիս	3000	Թուրաս	1200
Տիգ	2500	Մալտ	1500	Թուլիս	2800
Տամնս	2500	Մարէնկ	4300	Թորբիաս	900
Տուրբ	4800	Մարգէլլ	6500	Ուրանս	5000
Տարբ	2100	Մէլ	2000	Վալթուրս	5000
Էսանամն	2600	Մուրնս	3100	Եէտս	3600
Էյսարաաս	3000	Նէլս	2000	Զէգրա	1000
Էլէքթրս	3200	Օրլանս	3000	Տիթանրնս	200
Տրաթս	2600	Օթելլս	5000	Ճրմաս	200
Ֆալբան	800	Օգրանս	4500	Զէբս	140
Ֆէնս	700	Օգգդ	2000	Մաարիթթ	120
Էմիրլան Մոնարք					8000
Բիրմինգամ Մոնարք					8000
Լէդիլան Մոնարք					8100

Ասպասարկելու համար ամէն դիպարանի կ'ընդունուի

Դիմել առ Ֆ. ՀԻԼՏ ԵՒ ՈՒԻՅՕ Գործակալք

Թիւ 17-18, Քիւչիւք Միւլէթ խան, Ղալաթիա

40

VICHY

ՎԻՇԻ

Ֆրանսա (գաւառ Ալիէի)

ԿԱԼՈՒԱԾ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ

Վարչութիւն՝ փարիզ, 8, Պուլվար Մոնմարթր,

ՀԱՆՔԱՋՐՈՅ ԵՂԱՆԱԿ

Վիշիի հաստատութեան մէջ, որ Եւրոպիոյ նմանօրինակ լաւագոյն հաստատութեանց մին է, ամէն տեսակ լոգարան և դեղ կը գտնուի որովայնի, ֆոյենդի գլխի ցաւերու համար, սաստկութիւն, թոյլութիւն և ոչ կանոնաւոր հիւանդութեանց բուժման համար։

Ամէն օր՝ մայիս 15էն մինչեւ սեպտեմբեր 15՝ Թատրոն եւ նուագահանդէս իր գեղեցիկ, —Երաժշտութիւն պարտէզին մէջ։ —Ընթերցարան։ —Տիկնանց վերապահեալ սրահ։ —Խաղաց, խօսակցութեան եւ գընդակաղի սրահներ։

ԱՄԵՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ ԿԸ ՏԱՆԻՆ Ի ՎԻՇԻ

Տեղեկութեանց համար դիմել առ Ընկերութիւնն, Պուլվար Մոնմարթր, 8, փարիզ։ 427

COMP' RUSSE

DE NAVIGATION A VAPEUR ET DE COMMERCE

ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱԾԻՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Նաբթուան երթեւեկութիւնք

Բէ. 24 5 Օտէսայի ուղղութեամբ, ժամ 2ին յետ միջօրէի։

Գշ. 256 Աղէքսանդրիոյ ուղղութեամբ, ժամ 5ին յետ միջօրէի. Գիրքերի ճանապարհ

Դշ. 26.7 Սեւծովուն ուղղութեամբ, առաւօտեան ժամ 10ին։

Դշ. 267 Սուրհանդակ գնալի փոքր Աւրդ նաւահանգիստները մինչեւ պարապամ. առաւօտեան ժամը 11ին։

Գշ. 27 8 Սեւծովի ուղղութեամբ, ժամ 2ին յետ միջօրէի։

Ադգ.—գոմս, 26/7, երեքշաբթի օրը կ գալ։ Ն գնալ Սուրիոյ նաւահանգիստները մինչեւ ուղեւորը Զմիւռնիոյ մէջ պիտի հանգիստի թրիքոլի, Պէյրութ, Եաֆա, և Բոր-Սայիտ գացով շրջելու։ 12

Արտօնատէր Ս ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ. ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՒ

EMULSION SCOTT

(ՍԿՕՏԻ ՕՀԱԲԸԿ)

ՄՈՐԻՒ ՁԿԸՆ ՉՈՒՏ ԻՒՂ

Իրենցմէջ որ շատ Ա սպասով

Գատարտակալ ձեռամբ ՍԿՕՏԻ և ԳՕՌԻՆԻ

ի Նիւ-Եորք։

Կարեւոր է

Մարիւ ձկան հուտ իւղի բոլոր յատկութիւններն ղատ. իբոֆոսֆիդներու յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ թոքախտը

Կը բուժէ անարիւնութիւնը

Կը բուժէ խոյլերը

Կը բուժէ հաղը, ցրտառութիւնները

Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը

Կը բուժէ մանկանց ճոզաձութիւնը

Թժիշկներէն ընդունուած է, անորմ համ ու հոտ ունի, դիւրամարս է, և ամէնէն փափուկ ստամոքսները կը տանին զայն.

Կը վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղագործաց քով։

Գործակատարք ի Կ. Պոլիս, ՀԱՄԱԼԷՐ ԵՒ ՀԻՐԵԱԼ

ՌՈԵԱԼ ԷՔՍՊՐԷՍ

ԱՍԻԻՌԱՆՍ ՔՈՌԲՈՐԷՇԸՆ

ԱՄԵՆԷ ՀԻՆ ԵՒ ԱՄԵՆԷ ՄԵԾ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ 1720ԻՆ

Դրամագլուխ աւելի քան	Անգլ. ոսկի 4,000,000
Ցարդ հրդեհի արկածից համար տուած է	» 35,000,000

Ընկերութիւնը կ'ապահովագրէ քարաշէն և փայտաշէն ամէն տեսակ կալուածներ, կահ կարասիք և ապրանք։

Վճարումնը ամենայն կանոնաւորութեամբ և մանաւանդ առանց որ եւ իցէ ձգձգի կը կատարուին։

Աւելի ընդարձակ տեղեկութիւն առնուլ փափաքողը կը հրաւիրուին դիմել առ Ընդհանուր գործակալ Ճ. Վ. ՈՒԻԹԱԼ ԵՒ ԸՆԿ.

140 Պահչէ Գաբու, Մէյտանճըք ազաք, Ուիթալ խան։



ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՒԹԱՆ

Ն. ԲԱՐԷՔ ԵՒ ԸՆԿ.

Մարսէյլ և Պոլսոյ դէպ կանոնաւոր նաւեր

Սամսոն, Տրապիզոն և Պաթում երթալիք յառաջիկայ շոգենաւն է Մարսիլիոյ որ օգոստոս 31ին Մարսիլիայէն և սեպտ. 9ին Կ. Պոլսէն պիտի մեկնի։

Մարսիլիա երթալիք յառաջիկայ շոգենաւն է Լ. Կլը

Բարիզ. Լիոն-Մարսիլիոյ երկաթուղեաց ուղեւորութիւնն ի միասին առնլով,

Ա. կարգ 245 ֆրանք

Բ. » 175 »

Ուղեւորի և բեռի ապահովագրութիւն

Նաւագնացքի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատար թիմՈՒԹԷ ԲԷՂԻՒԼ

Մանուկ մինթէ ֆրանտ

5

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ԵՐԿԱԹՈՒՂԻՔ Ճ ԱՆԱՊԱԲՀՈՐԴԱՑ

ԳԻԾ Կ. ՊՈԼԻՍ—ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ—ՊԵԼԼՈՎԱ

Արեւ. Ձեռ. Թ. 2 Բէս. Ա.	Կէս. Ճամբ. Թ. 4 Ա.Բ.Գ.	Կէս. Խառն Թ. 62 Ա.Բ.Գ.	Կէս. Խառն Թ. 132 Ա.Բ.Գ.	Կէս. Խառն Թ. 124 Ա.Բ.Գ.	ԿԱՅԱՐԱՆՔ	Կէս. Խառն Թ. 123 Ա.Բ.Գ.	Կէս. Խառն Թ. 131 Ա.Բ.Գ.	Կէս. Խառն Թ. 61 Ա.Բ.Գ.	Կէս. Ճամբ. Թ. 7 Ա.Բ.Գ.	Արեւ. Ձեռ. Թ. 5 Ա.
ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.		ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	
7 30	8 18	9 30			Մէկ. Կ. ՊՈԼԻՍ ..... ժմ.			8 32	8 22	4 00
		6 41			Գուլմ—գաբու			8 23		
		6 52			Եէսի—գուլէ			8 07		
		7 12			Մարդիրիկ			7 44		
		7 26			ԱյասԵֆանու			7 22		
		7 45			Քիւչիւք — Զէքմէճէ			7 07		
		8 20			Սբարիա—գուլէ			6 22		
	9 33	9 05			Հարամիտէյ			5 56	6 58	
		9 43			Զամանա			4 53	6 17	1 50
9 52	10 51	10 25			Գալատաչէ			4 20		
		11 27			Սինէքլի			3 26		
	12 12	12 09		ժմ.	Զեղբէկէյ ..... մեկնում			2 37	4 38	12 09
	12 14	12 40		մկ.	Ժամանում			2 12	4 33	12 04
		1 41			Զորլու			1 26	3 36	
		2 33			Մուրաթլը — Բեօքլիք			12 26		
		3 05			Սէրիլէբ—Զէքթէլ			11 53		
	2 35	3 44			Լիւլէ—Պուրկաս			11 16	2 26	
		4 30			Գալա—Լիպլի			10 39	2 00	9 33
	5 13				Բալիկ—Բէկ			9 40		
		6 03			Ուզունա—Բէօբրիւ			8 56	12 50	
	4 16	6 47			Գուլէլի—Պուրկաս			7 46	12 21	8 09
		7 12			Ուրլի			7 14		
		7 39		ժմ.				6 25	11 37	7 14
4 21	5 09		3 15	մկ.	ԱԴՐ. ՊՈԼԻՍ ..... ժմ.		1 25		11 22	7 09
4 29	5 12		4 07		Գասանչէյ		12 32			
			4 57	ժմ.	Մուսթաֆա բաշա մկ.		11 39		10 27	6 12
5 24	6 12		5 17	մկ.	ժմ.		11 19		10 02	6 07
5 31	6 32		6 38	ժմ.	մկ.		9 54		9 19	5 23
6 14	7 13		6 53	մկ.	ժմ.		8 48		8 59	5 18
6 20	7 38		7 38	ժմ.	մկ.		8 01		8 38	4 33
	8 01				Թրնովա-Սէմէնլի ժմ.				8 23	4 48
	8 11		10 50	մկ.	Գալատաչէ—Հաչէէյ ...	12 50			7 32	
	8 47		11 50		Եէնի—Սարհալիք	12 06			7 06	
	9 34		1 07		Բաքայը	10 50			6 39	3 06
8 38	9 59		1 49		Գաբանիցա—Սթանիսլաւ	9 58			6 14	
	10 25		2 24			9 04			5 54	2 17
9 23	10 44		2 49	ժմ.	մկ.	8 25			5 34	2 12
9 33	11 04		3 20	մկ.	Փիլիպէ ժմ.	7 51			4 43	
	11 58		4 41		Թրանսիլ Բաղարճիք մկ.	6 45			4 17	
	12 22		5 12	ժմ.	Թարամպէ մկ.	6 00			4 16	
	12 23			մկ.	ժմ.				4 01	12 44
1 10	12 44			ժմ.	Պէյօվա մկ				12 34	15
3 20	4 29				Սոֆիա				5 51	9 20
2 10	9 50				Նիշ				10 38	50
8 43	4 48				Պէլգրատ				2 40	2 37
9 40	1 20				Պու